

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9478

~~261~~ 141

Ush

№ 9

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՅԱԿՈՉ»

№ 9

Ն. ԿՈՒԼԱԳԻՆ

# ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

638.1
4-91

Թ Ի Յ Լ Ի Ս - 1924

638.1

4-91

ՊՐԻՆՏԱԿԱՆ ԲՈՎՈՐ ՅԵՐՈՒՆԵՐԻ ՄԻՋՅԵՐ

Ն. Մ. ԿՈՒԼԱԳԻՆ

# ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

14944

Թարգմանից

Ա. Բ. Շ. ՄԻՒԹ. Ա. Բ. ՅԱՆՆ



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»  
ԹԻՖԼԻՍ № 9 1924

2011



**Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն**

Մեղուների կերակրման հարցը մեղվաբուծության գլխավոր խնդիրներից մեկն է: Մեղուների ընտանիքի ուշժը, բարեհաջող ձմերուժը և մեղուների հիվանդություններից մի քանիսը մեծով մասամբ կախված են մեղուներին այս կամ այն կերպ անդեղու կամ կերակրելու յեղանակից: Քաղցից կամ անհմուտ կերակրումից բազմաթիվ մեղուներ են վնասվում մեր մեղվաբուծության: Հասկանալի չէ ուրեմն, թե ինչու մեղուների կերակրման հարցին, բացի ընդհանուր ցուցումներից մեղվապահական ձեռնարկներում, նվիրում են առանձին գրքույկներ: Ռուսաց լեզվով այդպիսի գրքույկներ իր ժամանակին գրել են Ն. Վ. Պետրովը, Ի. Ի. Կորարևովը, Ս. Ֆ. Ռբուխովը և ուրիշները, բայց դժբախտաբար այժմ այդ գրքույկներն սպառված են և շուկայում այլևս չեն վաճառվում:

Այս գրքույկի նպատակն է լրացնել վերոհիշյալ պակասը: Նրա մեջ սկզբում տված են տեղեկություններ մեղուների անդառուության մասին ընտանի կերակրով, և այդ հարցը ավելի ևս պարզաբանելու համար հաղորդված են գլխավոր գիտելիքները մեղուների անդառուության գործարանների մասին: Ապա նկարագրված են մեղուների կերակրման յեղանակները մեղվապահի ձեռքով: Մեղվապահի ծանոթությունը, մեղուների անդառուության վերաբերյալ հարցերի հետ կը տա նրան հիմնավոր ցուցումներ մեղուներին կերակրելու անհրաժեշտության մասին՝ նրանց կյանքի այս կամ այն ժամանակամիջոցում:

Վերոհիշյալ գիտելիքների հետ միասին՝ այս գրքույկի մեջ հաղորդված են նաև առանձին մեղվապահների գլխավոր գիտողությունները մեղուների անդառուության և կերակրման մասին տված և այդ գիտողությունների քննադատական գնահատությունը՝ ըստ չափու կարողության մեր ուշժերի:

Ն. Կուլագին

Այս գիրքը սպվում է  
Ռուսաստ. Կոմիտեի, Կուսակցության Անդրկովկ. Յեկրային  
Կոմիտեի պատվերով

12002



88377-Ա2

326-98

## 1. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԱՇխատավոր մեղվի աղիքային անցքի կազմաբյուրեղ

Աշխատավոր մեղվի աղիքային անցքը բաղկացած է հետևյալ բաժանմունքներից, — սկսվելով բերանից՝ գնում է զլիխի ու կրծքի միջով և մտնում վորովայնի մուտքը մի բարակ ու յերկար խողովակ, վոր անվանվում է առաջնիթաց աղիք (նկար 1, kd sp): Առաջնիթաց կամ առաջավոր աղիքի սկզբնական բաժանմունքը կոչվում է կոկորդ: Ապա կրծքով անցնում է մի բարակ խողովակ — վորկորը կամ կե-



Նկար 1

րակրափողը, վոր վորովայնի մեջ դառնում է կտնարք կամ մեղրապարկ (նկար 1, H): Ապա կտնարքից կամ մեղրապարկից սկսվում է միջին աղիքը (նկար 1 և 5, md): Մեղրապարկի և միջին աղիքի սահմանում գտնվում է մի լեզվակ, վոր փակում է մեղրապարկը միջին աղիքի կողմից: Միջին աղիքը շարունակվելով դառնում է վերջին աղիք: Սա ավելի յերկար է միջին աղիքից, կազմում է ծայքեր և բաժանվում է

յերկու մասի, — առաջին մասի, վոր կոչվում է, 'այսպես անվանված, բարակ աղիք, և վերջին հաստ աղիքի, վոր գնալով դեպի դուրս՝ վերջանում է հետույքի բացվածքով (նկար 1 և 5, ed): Միջին և վերջին (բարակ) աղիքների սահմանում՝ աղիքի մեջ բացվում են առանձին խողովակներ, վորոնք կոչվում են Մալպիգյան անոթներ (նկար 5, II): Նրանք կատարում են արտաթորման գեր և մինչ վորոչ աստիճան համապատասխանում են բարձրագույն կենդանիների յերիկամունքներին:


Մեղունների կոկորդի հեա կապ ունին թուքի գեղձերը: Այգպիսի գեղձերի մի գույգ, վորոնք գտնվում են գլխի մեջ, բացվում են վերին ծնոտների հիմքի մոտ (նկար 2, Dr 2):

Այգ գեղձերը ավելի զարգացած են մոր և աշխատավոր ջահել մեղունների մարմինների մեջ: Հասակավորվելու հեա միասին՝ աշխատավոր մեղունների այգ գեղձերը փոքրանում են: Բոտերի թքային գեղձերը շատ քիչ են զարգացած: Այգ գեղձերի մի ուրիշ գույգ, վոր նույնպես գտնվում է գլխի մեջ, գալիս և դեպի կոկորդը բերանի յետևում (նկար 2, Dr 1): Այգպիսի գեղձեր ունին միայն աշխատավոր մեղունները: Մոր մեջ նրանք շատ քիչ են զարգացած, իսկ բոտերը բոլորովին չունեն այգպիսի գեղձեր: Վերջապես կան ջուխտակ գեղձեր, վորոնք գտնվում են կրծքի մեջ: Կրծքի գեղձի ընդհանուր յեղբը բացվում է լեզվակի (նկար 2, Dr 3) հիմքի մոտ: Այս գեղձը միանման զարգացած է մոր, բանվոր \*) մեղուններին և բոտերի մարմինների մեջ: Բացի վերոհիշյալ յոտոր գեղձերից՝ կան նաև մանրներ, վորոնք բացվում են կոկորդում:

Մեղունների աղիքային անցքը, նայելով կեղևների դի-

\*) Աշխատավոր մեղուններին այլ անունով կոչում են բանվոր մեղու:

տողություններին, կազմված է հետևյալ շերտերից, — արտաքին, վոր բաղկացած է աղիքների յերկարությամբ ձրգվող մկաններից. նրա տակ գետեղված է այլ մկանների մի շերտ, վորոնք դասավորված են աղիքի շուրջը (մկանների ողակաձև շերտ): Ողակաձև շերտի տակ գետեղված է կրկին յերկարությամբ ձրգվող մկանների յերրորդ շերտ: Այգ գալիս է մի բարակ թաղանթ, վոր ունի, այսպես անվանված, միավորիչ—գործվածքային կազմություն, և վերջապես աղիքները ի ներքուստ համահավասար ծածկված են վանդակիկներով (բջիջներով) կամ այլ յոտքով՝ եպիտելիով \*):



Նկար 2

Ներքին ազատ վերջավորության վրա վանդակիկները ծածկված են բարակ թաղանթով (փառով), վոր անվանվում է խիտինի կուտիկուլ: Միջին աղիքը գուրկ է այգպիսի թաղանթից: Միջին աղիքի ներքին մակերևույթը աշխատավոր

մեղվի մարմնի մեջ կազմում է բազմաթիվ ծալքեր: Բոտի աղիքի մեջ այգ տեսակ ծալքերն ավելի քիչ են:

Այն վանդակիկները, վորոնք համահավասար ծածկում են մեղունների միջին աղիքի ներքին մակերևույթը, ուսուցիկ ու համարյա զրանաձև են (նկարներ 3 և 4, շ):


Մարսողության ժամանակ առանձին վանդակիկները կամ նրանց ամբողջ բաժինները յենթարկվում են փոփոխությունների: Նրանց ծայրամասերը ուռչում են, բա-

\*) Վանդակիկներ (բջիջներ) անվանվում են այն հիմնական տարրերը (իբր մանրիկ ազյումներ), վորոնցից կազմված են կենդանիների և բույսերի մարմինները:

ժանվում—ընկնում են կաթիլների նման և մարսողության հյութերը այսպիսով վանդակիկներից մտնում են աղիքի մեջ (նկար 3, Za):

Ավերված վանդակիկները վերանորոգվում են մանրիկ վանդակիկների, այսպես անվանված՝ կրապտերի, բազմանալով: Մեկը այսպիսի վանդակիկներից զծագրված և 5-րդ նկարի վրա, Cr:

Վանդակիկների նկարագրված ավերումով և բացատրվում այն փաստը, վոր, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, մեղուների մարսողությունը կատարվում է վոչ անընդհատ, այլ ընդմիջումներով, վորոնց ժամանակ վերականգնվում է



նկար 3

վանդակիկների շերտը հիշված կրապտերից: նկար 5, Cr): Այդպիսի ընդմիջումների ժամանակ աղիքի վանդակիկները բաժանվում են աղիքախորշից առանձին փառով (նկար 3, Ch): Նոր մարսողական գործողության սկզբում այս փառը բաժանվում—ընկնում է միապաղաղ պարկի ձևով, փաթաթվում է ամեն կողմից կերակրի շմարված մնացորդները և կղկղանքի հետ միասին դուրս է գալիս:

Այսպիսով կարճ ժամանակվա ընթացքում, ասում է Յանդերը, կազմվում են բազմաթիվ, մեկը մյուսի մեջ զրված խողովակներ, վորոնք մշապես գտնվում են աղիքի մեջ: Թե վորքան անգամ մի որվա ընթացքում կրկնվում է մարսողության գործողությունը մեղուների աղիքի

մեջ՝ ճշտությամբ չէ վորոշված, բայց հավանական է, վոր 5—6 անգամից ավելի լինի:

Անհրաժեշտ է նկատել, վոր մյուս միջատների մարսողության գործողությունը փոքր ինչ այլ կերպ է նկարագրվում: Յեվ հիրավի, մարսողությունը այլ միջատների մարմնի մեջ կատարվում է այսպես,— միջին աղիքի վանդակիկների բաժանված մասերը շրջապատում են կերակուրը միապաղաղ փառով, վոր դուրս է գալիս առավելապես միջին աղիքի առաջավոր բաժանմունքից:

2. Աւխասավոր (բանվոր) մեղուների մարսողության գործողությունը.

Մեղուների մարսողության գործողության մեջ, ինչպես և ամեն մի կենդանու, պետք է տարբերել յերկու շրջան. — 1. մարսողություն, բառի նեղ իմաստով, կամ այլ կերպ ասելով՝ իբրև կերակուր ընդունած որդանական բարդ բաղադրությունների վերածումն ավելի պարզ ու հասարակների՝ այն հյութերի ներգործությամբ, վոր արտադրում են աղիքային անցքի վանդակիկները: 2. Հիշված յերկանակով ստացված պարզ բաղադրությունների թափանցումն կամ ծծումն աղիքային անցքի պատերի մեջ: Որինակ՝ մարդու, գազանների և թռչունների մարմինների մեջ, մարսողությունը հատկապես կատարվում է ստամոքսում և մասամբ աղիքի այն մասում, վոր դուրս է գալիս ստամոքսից և կոչվում է 12 մատնաշափ աղիք, իսկ բարակ աղիքների մեջ, վորոնք կազմում են 12 մատնաշափ աղիքի շարունակությունը, տեղի է ունենում կերակրի ծծումն: Միջատների մարմինների մեջ իբրև հատուկ մարսողության տեղ, ըստ մեծի մասին, ծառայում է այսպես անվանված միջին աղիքը: Այստեղ է զլիավորապես արտաթորվում այն հյութը, վորով բարդ հյութերը վերածվում են հասարակների:

Մեղուների կերակուրը, ինչպես սեզ լավ հայտնի է,

ծաղիկները նեկտարն է, վոր բաղկացած է գլխավորապես շաքարից (ածխածրատ) և բույսերի փոշուց (մեղվապահներն այդ փոշին սովորաբար անվանում են ծաղկավորչի կամ ուղղակի ծաղիկ), վոր տալիս է մեղվի մարմնին անհրաժեշտ սպիտակուցային նյութեր: Ծաղիկների նեկտարը, վոր հավաքում են մեղուները, բաղկացած է հետևյալ նյութերից.— գրանագան՝ ծաղիկների նեկտարը պարունակում է իր մեջ ջուր՝ 59,23% — 83,07%, յեղեգնաշաքար՝ 0—35%, փոխարկված \*) շաքար 1,5% — 17% և այլ նյութեր, որիննակ, բուսական խեժ, գեկտորին (ոսրայանյութ) և այլն: (Գեկտորին անվանվում են այն նյութերը, վորոնք իրանց կազմութեամբ միանման են ոսրային, բայց իրանց հատկութուններով զանազանվում են վերջինից: Նրանք համով քաղցր են, լուծվում են ջրի մեջ, չեն բյուրեղանում և թթվուանների ու ֆերմենտների (խմորիչ) ազդեցութեամբ կարող են դառնալ խաղողային շաքար): Նեկտարի բույրը կախված է նրա մեջ գտնված առանձին հոտավետ նյութերից, վորոնք անվանվում են յեթերային յուղեր: Վերջինների քանակութունն այնքան քիչ է մեղրի մեջ, վոր նրանց անհարելի է առանձնացնել հետազոտութեան համար բավարար չափով: Մեղուների մարսողութեան գործողութունը պարզաբանելու համար փոքր ինչ ավելի մասնաբաժանորեն խոսենք նեկտարի վերոհիշյալ բաղկացուցիչ մասերի մասին:

Յեղեգնի շաքարը, վոր նեկտարի բաղադրիչ մասերից մեկն է, անվանվում է այդպես նրա համար, վոր սուս Նա ստացվում էր բացառապես շաքարի յեղեգնի բույսերի նյութից:

Հետագայում գտան, վոր նույնպիսի շաքար կա նաև ուրիշ բույսերի նյութի մեջ, որիննակ՝ լորենու, վագրենու (կեչի), գզումի, գազարի, ճակնդեղի: Վերջինի նյութի

\*) Փոխարկված շաքար կոչվում է խաղողաշաքարի և պտղաշաքարի խառնուրդը: Թարգմ.

մեջ յեղեգնաշաքար պարունակվում է 15% -ից մինչև 19%: Ռուսաստանում շաքարն ստացվում է բացառապես ճակնդեղից: Յեղեգնաշաքարը հեշտութեամբ լուծվում է ջրի մեջ: Յերբ գոլորշիացնենք այն ջուրը, վորի մեջ լուծված է յեղեգնաշաքարը, նորից կստացվի նույնպիսի շաքար, սակայն վորպես բյուրեղ: Բայց նույնը չի կատարվի, ասում է պրոֆ. Ի. Ա. Կարլովիչը, յեթե մենք ավելացնենք այն ջրին, վորի մեջ լուծված է յեղեգնաշաքարը, փոքր քանակութեամբ վորևե թթվուտ, որիննակ, ծծմբային (այսպես անվանված արջասպային յուղ կամ քուցախի թթվուտ, վոր մտնում է քացախի բաղադրութեան մեջ). այս դեպքում, գոլորշիացնելով ջուրը, մենք արդեն չենք ստանա յեղեգնաշաքար բյուրեղների նման, բայց դրա փոխարեն մենք կարող ենք առանձնացնել այդպիսի լուծվածքից յերկու նյութ, վորոնք թեև նման են շաքարին, սակայն տարբերվում են նրանից իրանց հատկութուններով: Այդ նյութերը անվանվում են՝ մեկը — խաղողային շաքար կամ դեկտորոզա, մյուսը — պտղաշաքար կամ լեվյուլոզա: Առաջին նյութը գտնվում է շատ բույսերի նյութի մեջ: Նա անվանվում է խաղողաշաքար այն պատճառով, վոր առաջ ստացված է յեղել խաղողի նյութից: Յերկրորդ նյութը, պտղաշաքարը, նույնպես գտնվում է շատ բույսերի նյութի մեջ յեղեգնաշաքարի հետ միասին: Նա տարբերվում է խաղողաշաքարից այն բանով, վոր լուծված լինելով ջրի մեջ՝ վերջինիս գոլորշիացումից հետո՝ համարյա չե կազմում բյուրեղահատիկներ, այլ գառնում է թանձր շաքարաջուր կամ սիրոպ: Խաղողաշաքարի կամ պտղաշաքարի խառնուրդը կոչվում է փոխարկված շաքար: Անհրաժեշտ է նկատել, վոր յեղեգնաշաքարի փոխարկումը խաղողաշաքարի և պտղաշաքարի՝ կատարվում է վոչ միայն թթվուանների ներգործութեամբ, այլ և առանձին նյութերի, վորոնք կոչվում են ֆերմենտներ (խմորիչներ):

Այդ ֆերմենտները անվանվում են ինվերտազներ

(փոխարկուններ): Նրանք գտնվում են մեղվի թուփի մեջ և բացի դրանից, նրանք կարող են մտնել մեղրահացերի մեջ ծաղկափոշու հետ միասին:

Բացի մեղրից՝ մեղուները ուտում են նաև ծաղկափոշի, վոր մեղրի նման, գետեղում են հացերի կամ խորիսիների մեջ: Ծաղկափոշուց մի վորքը քանակություն միշտ էլ ընկնում է մեղրի մեջ: Ծաղկափոշին մատակարարում է մեղվին ազոտային ուտելիք կամ, ուրիշ խոսքով, ախալիսի ուտելիք, վոր պարունակում է իր մեջ սպիտակուցային նյութեր:

Այն կերակուրը, վոր ուտում են մեղուները, խառնուվում է մեղվի թուփի հետ վորկորի հենց սկզբում և կրանարքի կամ այսպես անվանված մեղրապարկի մեջ: Թուփը մտնում է աղիքային անցքի այդ մասերը թքային գեղձերից, վորոնք բացվում են աղիքային անցքի սկզբնատեղում (լեզվի հիմքի կամ արմատի մաս, վորով մեղուները մեղր են հավաքում, և կոկորդի ստորին մասում): Այն թուփի մեջ, վոր արտադրում է կրճքի մեջ գտնված թքային գեղձերի յերրորդ գույգը (նկար 2, 6) կա մի առանձին նյութ—ինվերտազի, խմորիչ կամ ֆերմենտ: Այս խմորիչը, ինչպես քիչ առաջ ասացինք, յեղեղնաշաքարը դարձնում է խաղողաշաքար և պտղաշաքար:

Շատ հավանական է, վոր այդպիսի խմորիչ գտնվում է նաև այն թուփի մեջ, վոր արտադրում են թքային մյուս գեղձերի առաջին և յերկրորդ գույգերը: Ապա Պետերսենը գտել է, վոր գեղձերի առաջին գույգից արտադրված թուփի մեջ, բացի ինվերտազից, կան էլի ուրիշ խմորիչներ, այսպես անվանված, պրոտեոլիտիքական ֆերմենտներ, վորոնք ընդունակություն ունեն ծաղկափոշու մեջ գտնված բարդ կազմությամբ սպիտակուցային նյութերը վերածելու ավելի պարզ նյութերի: Վերջապես բանվոր մեղուների թուփի մեջ գտնված է էլի ամիլազի խմորիչ, վորի ներգործությամբ ուլան գտնում է շաքար: Այսպի-

սով՝ յերբ կերակուրը անցնում է մեղվի բերանի, վորկորի և մեղրապարկի միջով, նա խառնվում է խմորիչներ պարունակող թուփի հետ և յենթարկվում զանազան փոփոխությունների՝ համեմատելով այն դրության հետ, վորով նա ընդունված է,—յեղեղնաշաքարը լուծվում է և վերածվում խաղողաշաքարի ու պտղաշաքարի, վորոնք կազմում են մի խառնուրդ, այսպես անվանված փոխարկված շաքար: Ուլան, ընդունված կերակրի հետ միասին, փոխարկվում է շաքարի: Սպիտակուցային նյութերը, վորոնք գտնվում են ծաղկափոշու մեջ, գտնում են ավելի պարզ նյութեր, այսպես անվանված պեպտոններ:

Այս կիսամարս կերակրախյուսի հետագա վիճակը հայտնի է մասամբ միայն: Ամենայն հավանականությամբ՝ այն կաթնանյութը, վորով բանվոր մեղուները կերակրում են վորդերին, բաղկացած է հենց այդ կերակրախյուսից, վոր հետ է բերվում միջին աղիքից:

Հետաքրքրական գիտողություններ է արել Յե. Յեա Ջարինը այն փոփոխությունների վերաբերմամբ, վորոնց յենթարկվում է մեր սովորական յեղեղնաշաքարը, յերբ այդ շաքարն ուտում են մեղուները, և նա ընկնում է մեղվի կանարքի կամ մեղրապարկի մեջ: Ջարինը տվել է միջակ ույժի յերկու ընտանիքներից ամեն մեկին 25-ական ֆունտ շաքարային սիրուպ: Յերկու ուր հետո, յերբ մեղուները այդ ամբողջ շաքարը կրել-տարել էին ու տեղավորել մեղրահացերի մեջ, (իբրև մեղր) նա հանվեց ու թափվեց մեղրահացերից: Նրա մի մասը պահվեց կազմի հետագոտության համար, իսկ մյուս մասը կրկին արվեց ուտելու նույն ընտանիքներին: Յերկրորդ անգամ մեղուները շաքարից շինված այդ մեղրը կրեցին ու տեղավորեցին մեղրահացերի մեջ և նա մնաց այնտեղ մինչև հասունանալը: Միայն այն ժամանակ, յերբ մեղուները սկսեցին սերեկել (կնքել) նրան, նա հանվեց ու թափվեց մեղրահացերից և յերրորդ անգամ հետ արվեց մեղուներին: Յե-


բեք որ փեթակում մնալուց հետո՝ այդ մեղրը նորից հան-  
վեց և յենթարկվեց հետազոտություն

Շարարի սիրուպի մեջ, վոր յերեք անգամ անց եր կա-  
ցել սեղվի բերանի և մեղրապարկի միջով մինչև սերեկ-  
վելը, տեղի եյին ունեցել հետևյալ փոփոխությունները, —  
ջրի քանակությունը սիրուպի մեջ պակասել եր և 45% -ից  
իջել մինչև 13% -ի. յեղեգնաշաքարի պարունակությունը  
68% -ից նվազել և հասել եր 4% -ի, վորովհետև նա փո-  
խարկվել եր խաղողաշաքարի և պտղաշաքարի կամ փո-  
խարկված շաքարի, վորի քանակությունը ավելացել եր  
0% -ից մինչև 74% -ի: Բացի սրանից՝ մեղրի մեջ գոյացել  
եր զեկոտրինաման (ոսլայանյութի նման), նյութերի մի  
փոքր քանակություն և յերեացել եյին մի քանի Ֆերմենտ-  
ներ, որինակ ինվերտապի (մի նյութ, վոր արտադրվում ե  
թրային գեղձերից):

Թե ինչ փոփոխությունների յե յենթարկվում մեղու-  
ների կերակուրը սիջին աղիքում՝ զեռ ևս քիչ հետազոտ-  
ված հարց ե (նկար 1 և 5 ազ):

Ի՞նչպես հայտնի յե, շատ միջատների միջին աղիքը  
այն պիսափոր տեղն և, ուր կատարվում ե կերակրի մար-  
սողության գործողությունը: Մյուս կողմից՝ նրա մեջ տեղի  
յե ունենում և մարսված կերակրի ծծումը, մի բան, վոր  
կատարվում ե նաև աղիքի հետին բաժանմունքում: Նույն-  
պիսի յերևույթ տեղի ունի, հավանորեն նաև մեղու-  
ների մարմնի մեջ: Միջին աղիքից արտաթորված նյութը  
չեզոք բնույթ ունի, բայց յեթե միջին աղիքի պարունակ-  
ությունը թթու յե լինում, դա՝ *Դեննոֆի* կարծիքով,  
կախված ե այն բանից, վոր բերանից միջին աղիքն և ան-  
ցնում մեղունների թուքը՝ իր մեջ պարունակված մրջնա-  
յին թթվուտի հետ միասին: Ըստ *Պետերսենի* հետազոտու-  
թյունների, միջին աղիքի նյութը պարունակում ե իր մեջ  
մի այնպիսի նյութ (Ֆերմենտ), վոր կրում ե իր պրոտե-  
ազ անունը: Այդ նյութը լուծում ե ծաղկափոշու մեջ

զանված սպիտակուցային բարդ նյութերը: Նույն ժամա-  
նակ նկատված ե, վոր միջին աղիքում մարսողության ե  
յենթարկվում միմիայն այն ծաղկափոշին, վոր արորված-  
մանրացած ե (յերևի բերանում՝ ծնոտներով). իսկ այն  
ծաղկափոշին, վոր կուլ ե աված ամբողջ, մարսողության  
չե յենթարկվում: Այնպիսի խմորիչ, վոր մարսեցներ ծաղ-  
կափոշու թաղանթապա-  
ար, սեղունների սիջին ա-  
ղիքում չկա: Բացի պրո-  
տեազի խմորիչից՝ միջին  
աղիքում կան նույնպիսի  
խմորիչներ, վորպիսիք  
կան և թուքի մեջ, այ-  
սինքն ինվերտազներ և  
ամիլազներ: Նրանք մրա-  
նում են միջին աղիքը,  
յերևի, թուքի հետ սիա-  
սին:



Նկար 4

վերջապես՝ միջին աղիքի նյութ, ըստ *Դեննոֆի*, պա-  
րունակում ե իր մեջ մի այլ խմորիչ ևս, այսպես անվան-  
ված խիմոզինը, վոր ընդունակություն ունի կտրելու կաթը:

Ինչ վերաբերում ե ճարպի զերին մեղունների սննդա-  
նության մեջ, պետք ե ասել, վոր նա վոչ մի զեր չե  
կատարում, — այսպես ցույց ավին տեղի ունեցած փորձերը:  
Յերբ մեղուններին կերակրում եյին ճարպերով, որինակ  
կաթի սերով, յերեաց, վոր ճարպը անցնում ե աղիքների  
միջով առանց վորեև փոփոխություն կրելու և զուրա ե  
զալիս կղկղանքի հետ միասին: Երբևլ յերբնապես զանում  
եր միայն ճարպի մանր կաթիլներ միջին աղիքի վանդա-  
կիկների մեջ՝ մտա այն տեղին, ուր բացվում են արտա-  
թորիչ գործարանները (մալպիգյան անոթները) (նկար  
4, 44):

Այդ ճարպը շատ փոքրիկ մասնիկն և այն ճարպի, վոր

գտնվում է ծաղկափոշու մեջ: Պատժված բանվոր մեղու-  
ների աղիքները վանդակիկներում ճարպ համարյա չկա:  
Աչնան և ձմրան ամիսների ընթացքում բոլոր մեղուների  
աղիքների վանդակիկները զուրկ են ճարպային կաթիլնե-  
րից: Ճարպի հետքեր չկան նաև այն մեղուների աղիքնե-  
րի վանդակիկներում, վորոնք նոր զուրս են յեկել հարս-  
նյակի շրջանից, ինչպես և չրկան բուսերի աղիքների վան-  
դակիկներում: Ճարպային կաթիլների բացակայությունը  
մեղուների մարմիններին մեջ ձմրան ժամանակ, հիմք է  
տալիս նյութատնտեսության յեղրակացներու, վոր մեղուները  
կարող են ուտել միայն թարմ, նոր ժողոված ծաղկափոշին:  
Բայց այդ յեղրակացությունը դժվար թե ճիշտ լինի: Մե-  
ղուները կարող են ուտել ծաղկափոշին և միևնույն ժամա-  
նակ շյուրացնել նրա մեջ գտնված ճարպը:

Վերջին ժամանակ նկլլները գտավ աշխատավոր մեղու-  
ների միջին աղիքի վանդակիկներում մանր կրային հա-  
տիկների նստվածք: Նա համարում է այդ հատիկները ար-  
դյունք նյութերի փոխանակության մեղուների մարմինների  
մեջ: Կարելի է, վոր հիշված կրային հատիկները կազմում  
են այն կաթնային բաղադրության մի մասը, վորով աշ-  
խատավոր մեղուները կերակրում են ձողերին (վորդերին):

Վերջերումս պրոֆ. Պավլովսկին գտավ աշխատավոր  
մեղուների հասա աղիքի մեջ կատալազ անվանված խմո-  
բիչը: Այս խմորիչը յերևան է գալիս մեղուների մարմին-  
ների մեջ ձմրան ժամանած \*):

\*) Փորը ինչ հիմք կա յենթադրելու, վոր մեղուների նոզեմա  
կոչված հիվանդության զարգացումը կապ ունի կատալազի գոյու-  
թյան կամ բացակայության հետ: Այս հարցի վերաբերյալ աշ-  
խատանքներ կատարվում են այժմ Մոսկվայի Պետրովսկի գյուղա-  
տնտեսական ակադեմիայի փորձնական կայարանում:


2221

3. Մեղուների կերակուր

Այն հարցի վերաբերմամբ, թե ինչ նշանակություն  
ունի այս կամ այն կերը մեղուների սնունդի համար, շատ  
քիչ փորձեր կան: Ամենից ավելի մանրամասնորեն այս  
հարցը ուսումնասիրել է պրոֆ. Յե. Ա. Բոզդանովը: Բոզդա-  
նովի փորձերից ամենից առաջ պարզվեց, վոր մեղուն կա-  
րող է ապրել համեմատաբար յերկար՝ կերակրվելով մի-  
միայն մեղրով, — մի ամսից փոքր ինչ ավելի կամ պակաս:  
Այսպես, որինակ, ինկուբատորում սերեկած (կնքած) վոր-  
դերից զուրս յեկած մեղուներին սկսեցին կերակրել մի-  
միայն մեղրով և ջրով հուլիսի 13-ին: Նրանք ապրեցին  
մինչև հուլիսի 30-ը, այսինքն 17 օր: Ստակած մեղուներ  
այդ ժամանակամիջոցում բոլորովին չկային: Հուլիսի 30-ի  
առավոտյան սատկեց մի մեղու, ոգոստոսի 1-ին ելի  
յերկու մեղու, 2-ին կրկին մեկը, իսկ 5-ին սատկեցին  
վերջինները: Յերկրորդ փորձի ժամանակ՝ կրկին ինկու-  
բատորում հանած մեղուներին հունիսի 25-ին բաժանեցին  
այսպես, — մի մասին սկսեցին տալ լիակատար կերակուր  
(մեղր և ծաղկափոշի), իսկ մյուս մասին՝ միմիայն մեղր:  
Յեվ այս փորձը շարունակեցին մինչև հուլիսի 14-ը, այ-  
սինքն՝ 19 օր: Մինչ այդ ժամանակ յերկու բաժանման  
մեջ ևս մահվան դեպքեր տեղի չունեցան: Հուլիսի 14-ին  
սխանդամից մահացան շատերը թե մեկ և թե մյուս խում-  
բում. մնացին ընդամենը միայն յերկու մեղու և այն ել  
այն խմբում, վորին կերակրում էին միմիայն մեղրով:  
Մեկը այդ մեղուներից սատկեց յերկու օրից հետո, իսկ  
մյուսը կենդանի եր մինչև հուլիսի վերջին թվերը: Այսպես  
ուրեմն, — ասում է Բոզդանովը, տարբերություն չկա վոչ  
լիակատար կերով և վոչ միմիայն մեղրով կերակրվող մե-  
ղուների կյանքի տեվականության մեջ: Բոզդանովի ասե-  
լով, տարբերություն չկար, նաև մեղուների վարմունքի  
կամ նրանց արտաքին տեսակի մեջ, թե լիակատար կեր և

326-93

14944



Թե միմիայն մեզը ստացող խմբերում: Ի հարկե, յեւակեա  
ուենեալով տեսական նկատումները, անհրաժեշտ է ընդու-  
նել, վոր այդպիսի տարբերություն իսկապես գոյություն  
ունի, բայց ճշտությամբ վորոշել այդ տարբերությունը  
դժվար է: Համենայն դեպս ակներև է, վոր հասակավոր  
մեղվի պահանջը սպիտակուցային կերակրով սննդվելու վե-  
րաբերմամբ մեծ չէ:

Մասնավորապես՝ ծաղկափոշին անհրաժեշտ է ինչպես  
իրենց՝ մեղուների կյանքի համար, այնպես էլ ձագերին  
(վորդերին) կերակրելիս: Նա անհրաժեշտ է նաև մեղ-  
րամոմի արտադրության համար:

Թե մեղուներին անհրաժեշտ է ուտել ծաղկափոշի —  
մի քանի ցուցումներ կան մեղվապահական գրականու-  
թյան մեջ: Այսպես՝ *Լեյկարտը* 1855 թվին գրում էր, թե  
նա համոզվել է մեղուների մի փոքրիկ ընտանիքի վերա-  
բերմամբ այն բանում, վոր աշխատավոր մեղուները՝ մինչ-  
և անգամ այն ժամանակ, յերբ նրանք այլևս չեն շինում  
փոշ մի մեղրահաց, ուտում են մեծ քանակությամբ ծաղ-  
կափոշի և լիովին մարսում: *Բերլինյան* և *Հոփմանը* գրա-  
նում էլին մեղուների միջին աղիքում ծաղկափոշի այն  
գույնով, վորով նրանք բերում են գաշախց այդ ծաղկա-  
փոշին:

Բացի գրանից *Բերլինյան* ցույց է տալիս, վոր նա իր  
դիտողություններից յեկել է այն համոզման, թե մեղու-  
ները ծաղկափոշի յեն ուտում նաև այն ժամանակ, յերբ  
վորդեր չեն սնուցանում և փոշ էլ մեղրահացեր չինում:  
*Լյուբենեցկին* ավելի հեռու է գնում այս ուղղությամբ:  
Նա նկատել է, վոր մեղուները յերբեմնապես շրջապա-  
տում են ալյուրով լի տաշտը, յեթև չեն գտնում ծաղկա-  
փոշի: *Կյուխենմյատերը* յենթադրում է, վոր մեղուները  
ուտում են միայն թարմ ծաղկափոշի:

Թե մեղուները ծաղկափոշի յեն ուտում նաև ձմեռը —  
այս հարցի վերաբերմամբ մեղվապահների կարծիքները

միանման չեն: *Լյուկը* ցույց է տալիս, վոր ձմեռող մեղվի  
հետին (ուղիղ) ալիքի մեջ նա գտել է ծաղկափոշու կու-  
տակումն առանձին հատիկների ձևով: Ծաղկափոշու ար-  
տաքին թաղանթները փոփոխության չեյին յենթարկվել,  
ինչպես նաև տեղի չեր ունեցել ծաղկափոշու ներմու-  
ծումը աղիքների վանդակիկների մեջ: Պրոֆ. *Կուկի* կար-  
ծիքով, մեղուների պահանջը ծաղկափոշու վերաբերմամբ  
ձմրան ամիսներին շատ քիչ է և կամ բոլորովին չկա  
այդպիսի պահանջ: Նույն հայացքն ունի և *Դուլիտտը* —  
*Լիակատար հանգստի ժամանակ*, ինչպես նաև այն միջո-  
ցին, յերբ վորդեր չկան փեթակում, — ասում է *Դուլիտտը*, —  
մեղուները ծաղկափոշի յեն ուտում չնչին քանակությամբ,  
իսկ յերբեմնապես կարող են առանց ծաղկափոշու գործա-  
ծության էլ անցկացնել ամբողջ շաբաթներ և մինչև ան-  
գամ ամիսներ: Փոքր ինչ այլ կերպ են նայում մեղուներ  
ի կողմից ծաղկափոշու գործածության վրա ձմեռվա ըն-  
թացքում ուրիշ մեղվապահներ, որինսակ՝ *Լյուբենեցկին*  
և *Չիշայը*: *Լյուբենեցկին* չափազանց վորոշակի ասում է,  
վոր մեղվապահը անպայման կը զզվա գարնանը, յեթև  
հանել է փեթակից ծաղկափոշու լի հացեր: Առանց ծաղ-  
կափոշու, նրա կարծիքով, ընտանիքը շատ ուշ կուժեղա-  
նա գարնանը և ապա ավելի ուշ ձագ կը տայ: *Չիշայը*  
յենթադրում է, վոր ծաղկափոշուց զրկված մեղուները  
ուժատպառ են լինում միակողմանի քաղցի պատճառով:

Ապա, ձմեռվա ընթացքում մեղուների ծաղկափոշով  
կերակրելու հարցի հետ գուզրնիմաց՝ քննվում է նաև մե-  
ղուների փորլուծության հարցը: *Բերլինյան* կարծիքով, մե-  
ղուների ուժեղ ընտանիքում յերբեմն, գարնան ժամանակ,  
շատ վաղ յերևան են գալիս վորդեր: Նրանց այդպես վաղ  
յերեվալը փեթակում, առաջ է գալիս արտասովոր տաք յե-  
զանակի կամ մեղուներին անժամանակ կերակրելու պատ-  
ճառով: Բայց հետո, յերբեմն անակնկալ կերպով, ասում է  
*Բերլինյան*, — վրա յեն համուում ցրտեր և նույնիսկ յերկա-

տե ցուրտ յեղանակ: Մեղունները՝ փեթակում դտնված վորդերին կերակրելու համար, հարկադրված են ուտել շատ մեղր և ծաղկափոշի: Այդ կերակրից նրանց աղիքների մեջ կուտակվում է կղկղանքի մեծ քանակություն: Ազատվել վերջինից մեղուններ չեն կարողանում, փորովհետև ցրտի պատճառով անկարող են դուրս թռչել փեթակից, — հետևանքը լինում է փորլուծություն: Չիշայրի ասելով՝ այն մեղունները, փորոնք ձմեռը լավ չեն պաշտպանված և համեմատաբար յերկար ժամանակ յենթարկված են ջերմության ստոր աստիճանների ազդեցության, չափից ավելի շարժումներ են կատարում՝ շրջապատի ջերմության աստիճանը բարձրացնելու համար: Մեղունների մարմնի այս աշխատանքը պահանջում է սովորականից ավելի կերակուր, փորի հետևանքով էլ մեղունների աղիքային անցքի մեջ կուտակվում է կղկղանք: Այսպիսի մեղունները, — ասում է Չիշայրը, — մրսած և ծանրացած են լինում այնքան, վոր անկարող են լինում դուրս թռչել փեթակից, և կղկղանքը դատարկում են ուղղակի մեղրահացիքի վրա: Վերջապես, ըստ Ռուալի դիտողությունների, այն մեղունները, փորոնք չաքար են ուտում, կարող են շատ յերկար ապրել, կամ բոլորովին և կամ շատ քիչ քանակությամբ կղկղանք դուրս թափելով աղիքներից: Բայց հենց մեղուններին տրվում է ծաղկափոշի, նրանց մարմնի ծավալը սկսում է մեծանալ, շուռչել, ինչպես ասում են մեղվապահները, և մեղուններն սկսում են դուրս թափել, թափանցիկ հեղուկի փոխարեն, այնպիսի կղկղանք, վոր մուգ գույն ունի, դարչաճուտ է և աղտոտում է հացերն ու փեթակը: Հետաքրքրական է նկատել, վոր մեղունների փորլուծության պատճառը մի քանի մեղվապահներ բացատրում են վոչ միայն ծաղկափոշու գործածության չափազանցությունը, այլ և նրա սակավությունը կամ բացակայությունը: Այսպես Լյուքսնեցկին ասում է, վոր մեղունները հիվանդանում են ձմեռը փորլուծությամբ վոչ ծաղկափոշու անչափ գործածությունից, այլ ընդհակառակը՝

նրանից, վոր չեն ունենում ծաղկափոշի: Բանն այն է — շարունակում է Լյուքսնեցկին, — վոր վաղ գարնանը՝ վորդեր կերակրելու համար՝ մեղուններին անհրաժեշտ է արտադրել, այսպես անվանված, կաթնահյութ, վոր պատրաստվում է մեղրից և ծաղկափոշուց: Յերբ վերջինը չկա, մեղունները հայթայթում են կաթնահյութի կազմության համար կարեւոր սպիտակուցային նյութերը իրանց սեփական մարմնից — որդանիզմից: Մարմնի այս յեղանակով վասնումն, ուժասպառ է անում մեղուններին և հասցնում է նրանց փորլուծության: Բերլինյալը նույնպես հաստատում է Լյուքսնեցկու վերոհիշյալ տվյալները:

«Յես և Կոլբը, — ասում է Բերլինյալը, — 1865 թվին փորձի համար թողինք մի փեթակ ձմեռելու առանց ծաղկափոշու, բայց մեղրի մեծ պաշարով: Հետևյալ 1866 թվի գարնանը՝ այդ փեթակը միակն եր՝ 70 փեթակների մեջ, վոր հիվանդ եր փորլուծությամբ և անհանգիստ»:

Ծաղկափոշին հարկավոր է վոչ միայն մեղունների կենդանություն համար, այլ նաև այն պատճառով, վոր մեղունները կարողանան կերակրել ձագերին (վորդերին) և մեղրամոմ արտադրել:

Ծաղկափոշու անհրաժեշտությունը մեղունների համար ձագ կերակրելու նպատակով՝ առաջին անգամ բացորոշ կերպով ապացուցեց, ըստ յերևույթին, Գուքերը: Նա տեղավորեց մեղունների մի ընտանիք այնպիսի փեթակի մեջ, վորտեղ կային ձվերով, վորդերով և մեղրով լի հացեր: Այսպիսի պայմաններում, փորձի սկզբից քիչ ժամանակ անցած, ձագերը սատկեցին: Յեվ ընդհակառակը՝ այն ընտանիքներում, ուր բացի մեղրից կար նաև ծաղկափոշի, ձագերը դարձանում էին կանոնավոր կերպով: Գուքերի դիտողությունները հաստատվեցին շատ մեղվապահների կողմից: Այսպես՝ Հունդեվերը ցույց է տալիս, վոր մեղունների վորդերը, փորոնք ծաղկափոշի չեն ստանում, վոչնչանում են ձվից դուրս գալուց 24 ժամ հետո: Լանգ-

ստորտը հաղորդում է, թե յերբ ծաղկափոշի չկա փեթակում, վոհնչանում են վոչ սիայն վորդերը, այլև մայրը դադարում է ձու ածելուց: Գեննոֆը և Լեյլարտը այն կարծիքն ունին, թե մեղուները, յերբ ծաղկափոշի են ուտում փեթակներում, ավելի քիչ մեղր են գործադրում այն կաթնահյութը պատրաստելու համար, վորով կերակրվում են ձագերը: Գարնանը, սուտում են նրանք, կարելի չէ առողջ վորդերի աճողին քանակություն տեսնել փեթակում, այն ինչ սեղրը այդպիսի ընտանիքներում շատ չէ պակասում, յեթե մեղուներին կերակրում են՝ տալով նրանց ցորենի ալյուր և ջուր:»

Ջերզոնը յիվ Բերլեսպը փոքր ինչ այլ կերպ են նայում ծաղկափոշու դերի վրա այն միջոցին, յերբ մեղուները վորդ են կերակրում: Ջերզոնի կարծիքով, մեղուները կարող են կերակրել վորդերին առանց ծաղկափոշի գործադրելու, բայց շատ կարճ ժամանակ և այն ել՝ մարմնի ույժերի մեծ վատնումով: Բերլեսպն ավելի հետու չէ գնում այս ուղղությամբ և պնդում է, թե մեղուները կարող են կերակրել ձագերին (վորդերին), միմիայն մեղրով: Սակայն թե Բերլեսպն և թե Ջերզոնը՝ պնդելով վոր ձագերին կերակրելու համար անհրաժեշտ կաթնահյութը կարող են հղգմվել մեղուների մարմինների մեջ և այն ժամանակ, յերբ նրանք կերակրվում են միմիայն մեղրով, այնուամենայնիվ պարզ ցույց են տալիս, վոր մեղուների մարմինների այս տեսակ աշխատանքը անկանոն է: Մեղուների կաթնահյութի մեջ գտնված սպիտակուցային նյութերը այսպիսի պայմաններում ստացվում են այն նյութերից, վորոնցից կազմված է մեղուների մարմինը, ուստի և տեղի չէ ունենում մարմնի ուժասպառումն և վերջի վերջո՝ մահ:

Վերջապես անհրաժեշտ է նկատել, վոր Յեսսերսկին հաշվել է մեղրի և ծաղկափոշու այն քանակությունը, վոր հարկավոր է վորդերը կերակրելու համար, — այսպես՝ նրա հաշվով՝ 1000 բջիջ վորդ կերակրելու համար մինչև բջիջ-

ների սերեկելը (փակելը), պահանջվում է 100 գրամ մեղր, 50 գրամ ծաղկափոշի և մոտ 30 գրամ ջուր: Բոուի վորդերի համար գործ է ածվում հիշված կերակրի համարյա կրկնապատիկը:

Բերլեսպը ցույց է տալիս, վոր մի փեթակում գտնված վորդերին կերակրելու համար հարկավոր է 25,5 կիլո մեղր:

Ր. Կուրլին համարում է, վոր աշխատավոր մեղվի մեկ վորդի լիակատար դարգացման համար հարկավոր է 120 միլիգրամ մեղր:

Այն հարցի մասին, թե մեղուները պետք է արգյոք ուտեն ծաղկափոշի՝ մեղրամոմ արտադրելու համար, մեղվապահների կարծիքները տարբեր են: Գուբնըրը, Միլնեյվարտը, Երլենմեյսը և Պլանտա-Րեյխենաուն յենթադրում են, հիմք ընդունելով իրենց անձնական փորձերը, վոր մեղուները կարող են մեղրամոմ արտադրել, յերբ նրանք ուտում են միմիայն մեղր կամ շաքար: Մյուս կողմից՝ Բերլեսպը, Ջիչայրի և ուրիշների փորձերը ցույց են տալիս, վոր մեղուները չեն կարող մեղրամոմ արտադրել, յեթե ծաղկափոշի չուտեն:

Վերոհիշյալ հակասական ցուցումները ստուգելու համար փորձեր կատարվեցին Պետրովսկ. Գյուգասնտեսական Ակադեմիայի մեղվանոցում: Այդ փորձերը ցույց տվին հետևյալը, — 1. յեթե մեղուները ուտում են այնպիսի մեղր, վորի մեջ բոլորովին չկա ծաղկափոշի, այդ դեպքում նրանք չեն շինում հացեր և չեն արտադրում մեղրամոմ. 2. այն մեղուները, վորոնք ուտում են սովորաբար իր մեջ ծաղկափոշի պարունակող մեղր, կարող են հացեր շինել:

Այսպես են բոլոր տեղեկությունները մեղուների կերակրի մասին, և այս բոլոր ավյայներից պարզ յերևում է, վոր աշխատավոր մեղուները պետք է ուտեն մեղր և ծաղկափոշի նախ իրանց կյանքի պահպանության համար, յերկրորդ կաթնահյութ պատրաստելու համար, վորով անու-

ցանվում են ձագերը (վորդերը) և վերջապես նրա համար, վոր կարողանան մեղրամոմ արտադրել:

#### 4. Մեղուների ուսելիքի բանավորյուներ

Մեղուների մի ընտանիքին անհրաժեշտ կերակրի քանակության հարցը առանձնապես հետաքրքրում է մեղվապահներին, ինչպես նաև մի այլ, ավելի մասնավոր հարց, վոր սերտ կապված է առաջինի հետ, դա այն է, թե մեղրի պաշարի վորպիսի քանակություն անհրաժեշտ է թողնել մեղուներին՝ մեղրը փեթակներից հանելիս, և մասնավորապես իբրև ձմրան պաշար մեղուների համար: Մեղվապահական գրականության մեջ այդ հարցի մասին կան տարբեր-տարբեր ցուցումներ: Ահա, որինակ, նրանցից կարևորները: Լանգստրոտի կարծիքով՝ անկարելի է ճշտությամբ վորոշել, թե վորքան մեղր է հարկավոր մեղուների մի ընտանիքին, վոր նա կարողանա բավարար կերպով անցկացնել ձմեռը: Դա կախված է ձմերելու յեղանակից վորովհետև կարելի չէ թողնել մեղուներին ձմերելու գուրսը՝ բաց յերկնքի տակ, կամ տանել ներս և տեղավորել այնպիսի առանձին կացարանում, ուր վոչ վոք գուր տեղը չի անհանգստացնի նրանց և ուր մեղուները չեն յենթարկվի ջերմության աստիճանի խիստ փոփոխականության: Դա մեծ մասամբ կախված է նույնպես ձմեռվա տևողությունից, վոր շափազանց փոփոխական է՝ նայելով կլիմային, և գարնան գալու ժամանակից: Հյուսիսային Ամերիկայի մի քանի շտատներում վեց ամսից ավելի ժամանակամիջոցում մեղուները համարյա վոչինչ չեն հավարում, մինչդեռ ամենահարավային շտատներում շատ քիչ է պատահում, վոր նրանք առանց բերքի մնան նույն իսկ վեց շաբաթվա ընթացքում: Բոլոր հյուսիսային և կենտրոնական շտատներում՝ ամեն մի փեթակի մեջ պետք է թողնել գոնե 25 ֆունտ մեղր, յեթե մեղուները ձմերում են գուրսը:

Բերտրանը այսպես է պատասխանում այն հարցին, թե մեղրի վորքան պաշար անհրաժեշտ է թողնել մեղուներին ձմեռվա համար. — բարեհաջող ընտանիքի պահանջը, ասում է նա, սեպտեմբերի կիսից մինչև ապրիլի վերջը կարող է հասնել 39—44 ֆունտ մեղրի:

Յեսսելսկին իր փորձերի հիման վրա յեկել է այն յեզրակացության, վոր մեղուները հոկտեմբերի 15-ից մինչև ապրիլի 1-ը ուտում են 5-ից մինչև 12,9 ֆունտ մեղր՝ նայելով այն գանազանատեսակ պայմաններին, վորոնց մեջ ձմերում են մեղուները:

Բուտլերովը մեղուներին ձմեռվա ընթացքում անհրաժեշտ կերակրի քանակության մասին ասում է, թե լավ, ուժեղ ընտանիքին արձակ փեթակի մեջ պետք է թողնել ձմեռվա համար մոտ 30 ֆունտ հացի մեղր (ավելի լավ 35 ֆունտ). փոքր ընտանիքներին պետք է թողնել ավելի քիչ: Ուլից է, — գրում է Բուտլերովը, — որ մեծ ընտանիքը ձմեռվա ընթացքում հազիվ թե ուտե մեղրի այն ամբողջ պաշարը, վոր թողել են նրան. բայց այդ մեղրը հարկավոր է վոչ միայն ձմրան, այլ և գարնան համար, յերբ բերքի ժամանակը դեռևս հեռու չէ, իսկ մեղուներին շատ մեղր է պետք վորդերին կերակրելու համար: Կոնդրատովը, խոսելով փեթակից մեղր հանելու մասին, մատնացույց է անում այն բանը, թե մեղվապահը մանրակրկիտ քննությամբ պետք է հավաստիանա, վոր ընի մեջ թողնված է 36—40 ֆունտից վոչ պակաս մեղր:

Կուլլանդան, մեղուներին ապահովելու համար ձմեռային պաշարով մինչև գարուն՝ խորհուրդ է տալիս մեղվապահներին թողնել փեթակում 4-ական ֆունտ մեղր ամեն մի ամսի համար, յերբ մեղուները անկարող են գուրս թոշել փեթակից:

Անդրիաշևը կշռելով այն մեղուների փեթակները, վորոնք ձմերել են ամեր, նրանց համար հատկապես շինված ձանձանոցում (ОМЦАННИК), գտել է, վոր

ձմեռվա ընթացքում փեթակների քաշը պակասել է 7—19 ֆունտ: Մենք փորձեցինք,—ասում է նա,—ձմեռը զետեղել մեղուններին զետեղելու նկուղում, տալով յերկու փորժիկ ընտանիքներին 6-ական ֆունտ մեղր ձմեռվա համար: Մեղունները կերել էյին մեղրը և չէյին ապրել մինչև գարուն:

Վերջապես՝ մեղվատառնության մի շարք ձեռնարկներում ասված է, թե այն մեղունների ընտանիքների համար, վորոնք ձմերում են ներսը՝ ճանճանոցում, անհրաժեշտ է թողնել ձմեռվա պաշար 20—25 ֆ. մեղրից վոչ պակաս, իսկ գուրքը ձմերոյների համար 30—40 ֆունտ:

Ավելի մանրամասնորեն մշակել է մեղունների կերակրի քանակության հարցը Բուրաշեվի մեղվատառնական գաղտցի նախկին կառավարիչ՝ ի. Շելվելյելը: Նա հաշվի է առել մեղրի գործադրության քանակը 1992—3 թ. ձսեռը՝ 35 ընտանիքներում, վորոնցից միայն յերկուսը ձմերում էյին այն տեղերում, ուր գրված էյին ամառը, մեկը Բուստի փեթակում, մյուսը—Լայանսի, մնացած 31 ընտանիքը ձմերում էյին ներսը՝ ճանճանոցում: Սրանցից 19 տեղավորված էյին Գադան-Բլատտի փեթակներում, իսկ մյուսները գանազան սիստեմի փեթակներում:

1903—4 թ. ձմրան ընթացքում Շելվելյելը վորոշել է քաշի կորուստը 33 ընտանիքներում, վորոնցից յերկուսը ձսեռում էյին ամառվա տեղերում, իսկ 31-ը՝ ճանճանոցում:

Ձերմության սասիճանը ճանճանոցում թե մեկ և թե մյուս տարիների ընթացքում տատանվում էր +1°—5° մեջ:

Կատարված փորձերը ավին ստարե տրված հետևանքները,—

Մեղունների հաց պակասեց

1902—1903 թ.	1903—1904 թ.
Ամառային տեղերում	Ամառային տեղերում
11,04 ֆ. (միջին թվով)	14,4 ֆ. (միջին թվով)
9,15 ֆ.-ից մինչև 12,33 ֆ.	9,8 ֆ.-ից մինչև 19 ֆ.

Ճանճանոցում

Ճանճանոցում

7,15 ֆ. (միջին թվով)	10,15 ֆ. (սիջին թվով)
3,17 ֆ.-ից մինչև 13,9 ֆ.	8,8 ֆ.-ից մինչև 19 ֆ.

Շեվելիի թվերից յերեւում է, վոր մեղունները ծախսել են թե մեկ և թե մյուս ձմեռվա ընթացքում ամառային տեղերում ավելի, քան ճանճանոցում, և հատկապես նույն չափով—մոտ 4 ֆունտ: Առանձին ընտանիքներում, վորոնք տեղավորված էյին ճանճանոցում, մեղրի գործադրությունն ավելի սակավ էր, քան այն ընտանիքներում, վորոնք մնացել էյին ամառային տեղերում: Շեվելիեր տալիս է նաև ավելի մանրամասն թվեր այս նույն հարցի մասին: Նա ցույց է տալիս, որինակ, թե վորքան մեղր են կերել մեղունները յուրաքանչյուր ամսի ընթացքում: Այսպես՝ մեղունները կերել են Բուստի և Լայանսի փեթակներում, վորոք ձմերում էյին ամառվա տեղերում,—

		Բուսի փեթակում	Լայանսի փեթակում
Հոկտ.	2-ից մինչև նոյեմբ.	2-ը 500 գր.	300 գր.
Նոյեմբ.	2-ից » դեկտ.	2-ը 450 »	700 »
Դեկտ.	2-ից » հունվ.	2-ը 420 »	750 »
Հունվ.	2-ից » փետրվ.	2-ը 380 »	950 »
Փետրվ.	2-ից » մարտի	2-ը 600 »	1000 »
մարտի	2-ից » մարտի	27-ը 1300 »	2600 »
		Ընդամենը՝ 3650 գր.	6300 գր.
		8,9 ֆ.	15,37 »

Նույնանման գիտողություններ արել էր Շելվելյելը և այն ընտանիքների վերաբերմամբ, վորոնք գտնվում էյին Գադան-Բլատտի և Բուստի փեթակներում և վորոնք ձմեռում էյին ճանճանոցում:

	Գողան-Բլաստի փերակում	Բուսի փերակում
Գեկա. 3-ից մինչև հունվ.	3-ը 100 գր.	500 գր.
Հունվ. 3-ից » փետրվ.	3-ը 300 »	200 »
Փետրվ. 3-ից » մարտի	3-ը 500 »	300 »
Մարտի 3-ից » ապրիլի	3-ը 500 »	800 »
Ապրիլի 3-ից » ապրիլի	12-ը 200 »	100 »

Համաձայն Րիխտերի գիտողությունների՝ ձմեռվա ընթացքում մեղուների կերած մեղրի քանակությունը կախված է տվյալ ընտանիքի մոր հասակից: 1909 թվականի ձմեռը՝ նա տարել էր ճանճանոց \*) ձմերելու 60 փեթակ, ուր Չերմության աստիճանը տատանվում էր 0 - 4<sup>0</sup>-ի մեջ: Իբրև հետևանք՝ ստացվեցին ստորև հիշված տվյալները.

1 ընտանիք, վոր ուներ 4 տարեկան մայր, կերել էր ձմեռը 3<sup>3</sup>/<sub>4</sub> ֆունտ, 6 ընտանիք, վորոնք ունեյին 2 տար. մայրեր, կերել էյին 6<sup>1</sup>/<sub>8</sub> ֆ., 9 ընտանիք 2 տարեկան մայրերով կերել էյին 7<sup>7</sup>/<sub>36</sub> ֆ., 24 ընտանիք 1 տարեկան մայրերով կերել էյին 8,61 ֆ., 18 ընտանիք նույն տարվա մայրերով կերել էյին 10<sup>1</sup>/<sub>6</sub> ֆունտ:

Վերոհիշյալ հետևանքները կատարելապես հասկանալի լին. ջահել մայրերը, վորոնք ավելի զործուեյալն յեռանդոտ են լինում, զարնանը սկսել են ավելի վաղ ձու դնել և զբախով ավելացրել են մեղրապաշարի ծախսումը վորդեր կերակրելու համար:

Չմնովա ընթացքում մեղուների կերած մեղրի քանակությունը վորոշել է նաև Բաղովը յերեք ընտանիքների վերարբերմամբ, վորոնցից մեկը ձմերում էր ամարային տեղում, յերկրորդը՝ ճանճանոցում և յերրորդը՝ գետնափոր նկուղում: Ամարային տեղում մնացած ընտանիքը գետեղ-

\*) Ճանճանոց ասելով՝ հայ մեղվապահներից վումանք հասկանում են այն տեղը, ուր ամառվա ընթացքում զրված են լինում մեղուների փեթակները. սակայն այս գրքույկի թարգմանությունում մեջ «ճանճանոց» խոսքը զործ է ամված իր իսկական իմաստով, սուտական ОМНАНИК բառի փոխարեն, այսինքն հատկապես մեղուների համար շինված մի նկուղ կամ սենյակ, ուր գնում են փեթակները ձմերելու: Ծանոթ. թարգմանչի

ված էր անգլո-ամերիկական փեթակում: Նրա քաշը պակասեց հոկտեմբերի 7-ից մինչև ապրիլի 10-ը 12 ֆ., ապրիլի 10-ից մինչև նույն ամսի 14-ը 1<sup>1</sup>/<sub>2</sub> ֆ., ընդամենը՝ 13<sup>1</sup>/<sub>3</sub> ֆունտ, հաշվելով սրա հետ սատկած մեղուներին և մեղրամոմը (ընդամենը՝ 1<sup>1</sup>/<sub>2</sub> ֆունտ): Ճանճանոցում ձմերուղ մեղուները գտնվում էյին Լեվիցկու փեթակում: Կշռի պակասը այս ընտանիքում հոկտեմբերի 7-ից մինչև ապրիլի 14-ը հավասար էր 26 ֆունտի, հաշվելով սրա հետ նաև սատկած մեղուներին, մեղրամոմը և փեթակից հանված շաքարացած մեղրը (մոտ 2 ֆունտ): Վերջապես՝ այն ընտանիքը, վոր ձմերում էր դետնափորում, գտնվում էր Գողան-Բլաստի փեթակում: Նրա քաշը պակասել էր հոկտեմբերի 7-ից մինչև ապրիլի 10-ը 16<sup>1</sup>/<sub>2</sub> ֆունտ, վորի մեջ հաշվելու է 1<sup>1</sup>/<sub>4</sub> ֆունտի շափ սատկած մեղուներ: Այսպիսով, համաձայն Բաղովի տվյալների, մեղրի ամենամեծ քանակությունը կերել էր այն ընտանիքը, վոր ձմերում էր ամառվա տեղում, իսկ ամենաքիչը՝ նա, վոր ձմերում էր ճանճանոցում\*): Բաղովի վործերը կատարվել են Ուֆրմի նահանգում, մի շափազանց խիստ ձմեռվա ընթացքում, յերբ Չերմության աստիճանները յենթարկվում էյին մեծ ու հանկարծական փոփոխությունների:

Վերջին ժամանակ Կլեյստը, իր բազմամյա գիտողությունների հիման վրա յեկավ այն յեղրակացության, վոր մեղուները ձմեռ ժամանակ, յերբ Չերմության աստիճանը ավելի ցածր է, ավելի քիչ մեղր են ուտում, քան այն ժամանակ, յերբ այդ աստիճաններն ավելի բարձր են: Այսպես՝ 1909—1910 թ.թ. ձմեռը՝ 86 չափազանց ցուրտ

\*) Անշուշտ այս թվերի մեջ տեղի յե ունեցել տպագրական սխալ. 13<sup>1</sup>/<sub>2</sub>-ը չի կարող մեծ լինել 26-ից: Յեթև այդ թվերը ճիշտ են, ապա պետք էր ասել հակառակը, վոր ամենից շատ մեղր կերել են ճանճանոցում ձմերուղները և ամենաքիչը՝ ամարային տեղում ձմերուղները: Ծանոթ. թարգմ.

որերի ընթացքում, մեղուների մի ընտանիք կերել էր 1350 գրամ մեղր, իսկ 65 տաք որերի ընթացքում— 1800 գրամ: 1910—1911 թ.թ. ձմեռը՝ նույն ընտանիքը 98 ցուրտ որերի ընթացքում կերել էր 750 գր., իսկ 59 տաք որերի ընթացքում—3090 գրամ:

Կլեյստը վերոհիշյալ ավյալները բացատրում է նրանով, վոր յերբ մեղուները կատարելապես հանգիստ են, նրանց մարմնի մեջ նյութերի փոխանակումը նվազում է, որինակ, աղյան շրջանառության և շնչառության գործողությունները և նրանք այս պատճառով ավելի քիչ կարիք են զգում կերակրի:

Այնուհետև ինչ վերաբերում է մեղուների գործածած մեղրի քանակությանը, գարնան ժամանակ, սկսած փետրվարից մինչև բերքի սկիզբը, պետք է ասենք, վոր դա կախված է ընտանիքի ուշից, տեղի կլիմայական պայմաններից և սպա մասամբ այն բանից, թե վորքան մեղրառատ է ավյալ տեղը: Մեղվապահական ձեռնարկներում այս հարցի վերաբերմամբ ընդհանրապես ցույց է արվում, թե մեղուների զարնանային կերակրման համար հարկավոր է 10 ֆունտ ամեն մի ընտանիքին: Շելլեյի վիտոլոգիայում գարնան ժամանակ մեղրի ծախսումը ավելի շատ է և կարող է հասնել մինչև  $14\frac{1}{2}$  ու նույնիսկ 20 ֆունտի միջին թվով ամեն մի ընտանիքում: Ուժեղ ընտանիքները, բարեհաջող գարնան ժամանակ, կարող են այնքան շատ բերք բերել գարնան հենց սկզբից, վոր հավաքված մեղրը կատարելապես բավական կը լինի ընտանիքի ընթացիկ ծախսերը ծածկելու համար և նույնիսկ կարող է ավելորդ ել ստացվել, բայց միջակ և մանավանդ թույլ ընտանիքները կարիք ունեն գարնան ժամանակ մեղրի պաշարի մեծ քանակության:

Վերջապես վորոշելու համար մեղրի այն քանակությունը, վոր հարկավոր է մեղուների մի ընտանիքին, ան-

հրաժեշտ է ի նկատի ունենալ մեղրի պարտավորական ծախսումը ամառվա վերջում և աշնան սկզբին, մինչև հոկտեմբեր ամիսը: Ըստ Շելլեյի վորոշման՝ այդ ծախսը հավասար է միջին թվով  $13\frac{1}{2}$ — $14\frac{1}{4}$  ֆ. ամեն մի ընտանիքի համար: Փորձերը կատարվում էին յերկու տարի— 1903 և 1904 թվականներին— և յերկու տարվա թվերն էլ ստացվում են համարյա միանման:

Այսպես ուրեմն մեղուների կյանքի մեջ կա համեմատաբար մեծ ժամանակամիջոց, յերբեմն 9 ամիս, իսկ բացառիկ տարիներում նույնիսկ սրանից ել ավելի, յերբ մեղուները պետք է ապրեն ի հաշիվ այն պաշարի, վոր պատրաստել են նրանք մինչև այդ ժամանակ և յեթե այդպիսի պաշար չկա, մեղուներին ոգնություն պետք է հասնի մեղվապահը կերակրման միջոցով:

Ինչ վերաբերում է կերակրի այն քանակությանը, վոր հարկավոր է մեկ մեղվին, պետք է ասենք, վոր Բերլեյի կարծիքով՝ մի մեղուն 24 ժամվա ընթացքում ուտում է 4,87 միլիգրամ մեղր: Կուրլին այդ քանակությունը համարում է 4 միլիգրամ: Յելակեա ունենալով տված թվերը՝ պետք է գալ այն յեզրակացություն, վոր մեղուների մի ձագը՝ բաղկացած 28,000 մեղուներից (5 կիլոգրամ քաշով) կուտի մի որ ու զիշերվա մեջ 110 գրամ մեղր: Մի մեղուն, յեթե նա սպրի միջին թվով 6 շաբաթ, կուտի 120 միլիգրամ մեղր:


##### 5. Մոր յվ բուռի աղիքային անցքն ու անկատարյունը

Մոր և բուռի աղիքային անցքը ընդհանուր առմամբ քիչ է զանազանվում աշխատավոր մեղվի աղիքային անցքից: Յանդերը հավատացնում է, թե մոր և բուռի միջին աղիքը ավելի յերկար է աշխատավոր մեղվի միջին աղիքից: Յեվ իսկապես՝ մոր միջին աղիքը հավասար է 13 միլիմետրի, (նկար 5, 6), բուռինը—19 միլիմետրի, (նկար

5, C) իսկ աշխատավոր մեղվինը—10 միլիմետրի (նկար 5, A): Այսպիսի տարբերությունից,—ասում է Յանդերը,— պետք չէ յեզրակացնել, թե աղիքի այն մակերևույթը, վորտեղ մարսվում է կերակուրը, բոսի մարմնի մեջ ավելի մեծ է, քան աշխատավոր մեղ-

վի կամ մոր մարմինների մեջ: Այն ինչ վոր պակասում է միջին աղիքի յերկայնությունը իզական սեռի մեղունների մարմինների մեջ, լրացվում է նրա ծավալով: Բացի սրանից՝ աղիքի ներքին մակերևույթը մեծանում է բազմաթիվ ծալքերով, վորոնք ավելի քիչ նկատելի են բոսի աղիքի մեջ: Ապա, ինչպես առաջ ցույց տվինք, տարբերություն, կա մոր, բոսի և աշխատավոր մեղվի թքային գեղձերի կազմության մեջ: Այն գեղձերը, վորոնք բացվում են վերին ծնոտների հիմքի մոտ (նկար 2, Dv 2), բոսի մարմնի մեջ շատ ավելի քիչ են զարգացած, քան աշխատավոր մեղվի կամ մոր մեջ: Յեվ սրա հետ միասին, համաձայն Շիմենցի գիտողությունների, աջ և ձախ գեղձերը միաչափ չեն: Այն գեղձերը, վորոնք բացվում են կոկորդի մեջ, (նկար 2, Dv 1) բոսի կոկորդում բոլորովին չկան, իսկ մոր մեջ կան միայն նրանց չնչին մնացորդները: Վերջապես կա Շենֆելդի ցուցումը, վոր բոսի և մոր միջին աղիքի պատերը ավելի բարակ են, քան աշխատավոր մեղվինը:

Մոր և բոսի կերակրի մասին նկատենք, վոր նրանք վերցնում են մեղր բջիջներից այնքան, վորքան կամենում են: Մյուս կողմից,—ասում է Շենֆելդը,—բոլոր մեղվապահներին հայանի է, վոր մայրն և բոսերը յերբեք ինքն



նկար 5

իրենց ծաղկափոշի չեն ուտում: Այն սպիտակուցային նյութերը, վորոնք դանվում են ծաղկափոշու մեջ, մայրն և բոսերը ստանում են աշխատավոր մեղուններից: Շենֆելդը գետեղում էր բոսերին այնպիսի մեղրահացի վրա, վոր փակված էր ցանցապատ վանդակի մեջ կրկնակի պատերով, վորոնք 1 սանտիմետր հեռու էին միմիանցից, և դնում էր այդ մեղրահացը փեթակի այն մասում, ուր կային վորդեր: Այս պայմաններում բոսերը սատկում էին յերեք ուրից հետո: Ընդհակառակը՝ այն բոսերը, վորոնք զրկված էին նույն պայմանների մեջ, ինչպես և առաջինները, սակայն միապատ վանդակում, վորի միջով աշխատավոր մեղունները կարող էին կերակրել նրանց, չէին սատկում: Պետրովի ասելով՝ մոր կերակրումը աշխատավոր մեղունների միջոցով տեղի չէ ունենում միայն մոր բեղմնավորումից հետո: Ինչպե՞ս վորումից առաջ մայրը ինքն է հայթայթում իրեն համար կերակուր: Նրա միջին աղիքում այդ ժամանակամիջոցին մշտապես կարելի չէ գրանել ծաղկափոշի, իսկ բեղմնավորումից 2—3 ուր հետո ծաղկափոշու հետքերը մոր ստամոքսի մեջ բոլորովին անհետանում են:

Մեղրի այն քանակը, վոր ուտում է մայրը, անաղին է: Այդ բանին իբրև աղացույց կարող են ծառայել հետևյալ փաստերը.—ձմեռվա ընթացքում մայրերի քաշը հավասար է 0,002 ֆունտի, զարնանային ձուտաման միջին ընթացքում մոր քաշը ավելանում է և հասնում մինչև 0,004 իսկ յերբեմն նաև 0,006 ֆունտի: Մոր քաշի այսպիսի ավելացումը բացառապես կախված է նրա սննդից: Ապա, ըստ Գեննիֆի հաշիվների, մեղվի 2000 ձուռն կշռում է մոտ 0,40 գր., իսկ անբեղմնավոր մայրը, վորի ձվարանը գեռես չի սկսել գործել, Լեյկարտի ասելով, քաշում է միայն 0,20 գր.: Համաձայն Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի հետազոտությունների՝ մայրը որական 2000 ձուռն և դնում ամառը մի քանի շաբաթ միայն (մին-

չև 5 շաբաթ)։ Ինքն ըստ ինքյան հասկանալի չէ, վոր մոր աղպիսի բացառիկ արտադրականությունը պահանջում է կերակրի բավականաչափ քանակություն։ Այն կերակուրը, վորով աշխատավոր մեղուները կերակրում են մորը, այնպես նախապատրաստված է մեղուների միջին աղիքում, վոր մորը մտում է միայն յուրացնել նրան։ Կարող է պատահել, վոր նորագույն, ավելի ճշգրիտ հետազոտությունները հետո, մոր և ձվերի քաշի թվերը փոքր ինչ ուրիշ կը լինին, քան վերոգրյալները, սակայն ընդհանուր միտքը մոր մեծ քանակությամբ կերակուր ուտելու մասին կը մնա ուղիղ։

Բոռերի կերած կերակրի քանակությունը, ամերիկական մեղվապահ Բախմների գիտողություններով, այսպես է — 1000 բոռ ուտում են մոտ  $1\frac{1}{3}$  ֆունտ կերակուր։ Մի այլ ասերիկացի մեղվապահ գրում է, թե նրա մոտ բոռերը, վորոնք զբավել էյին մեղրահացի վրա 28 դ. տարածություն, կերան 5 շաբաթվա ընթացքում մոտ 63 մոխավ մեղր։


Բոռը, Յեսսըսկու ասելով, ուտում է որական վոչ պակաս քան  $1\frac{1}{3}$  գրամ մեղր, հետևաբար 1000 բոռ ուտում են յուրաքանչյուր շաբաթ  $3\frac{1}{3}$  ունց, այլ խոսքով 10 որվա ընթացքում — մոտ 3 ֆունտ։ Յեթե հաշվի առնենք, վոր փեթակներում յերբեմն լինում են 2000-ի չափ բոռեր և վոր նրանք ապրում են մոտ 60 որ, դուրս կը գա, վոր մեղվապահը բոռերի պատճառով կորցնում է 30 ֆունտ մեղր։ Ուղիղ է, մեղրի այս քանակությունը պետք է փոքր ինչ քչացնել, վորովհետև բոռերը վոչ միայն իրանք են մեղր ուտում, այլ և նրանց կերակրում են աշխատավոր մեղուները անսղարար կերակրահյութով, բայց մյուս կողմից պետք է ի նկատի ունենալ, վոր Յեսսըսկու վերոհիշյալ գիտողությունները վերաբերում են այնպիսի բոռերի, վորոնք ազատ չէյին։ Ազատության մեջ գտնվող բոռը անսղարման ավելի կուտե։

Բարտեշեմի գիտողություններով՝ ֆրանսիայում մեղուների այն ընտանիքները, վորոնք բոռ չունեն չին, տալիս էյին, 3—7 կիլո մեղր ավելի (կիլոն =  $2\frac{1}{2}$  ֆունտի), քան բոռ ունեցող ընտանիքները։

Այսպես ուրեմն բոռերի կերակրման համար մեծ աշխատանք է պահանջում աշխատավոր մեղուներից, վորոնք հարկադրված են հավաքել նրանց համար մեղրի համեմատաբար մեծ քանակություն և պատրաստել անսղարար հյութ։

6. Մեղվի վորդերի աղիքային անցքը յեվ կեակուրը

Մեղուների վորդերի աղիքային անցքը բաղկացած է յերեք բաժանմունքներից, — առաջավոր աղիքից (նկար 6, Vd), միջինից (նկար 6, Md) և վերջինից (նկար 6, Ed)։ Առաջավոր աղիքը շատ կարճ է և փոքր ինչ սեղմված վերելից դեպի վայր։ Վերջին աղիքը գնում է հետույքի բացվածքից մինչև վորդի մարմնի 11-րդ ողակը՝ կազմելով նույն ժամանակ փոքրիկ հանգույց։ Կույր, փոքր ինչ լայնացած ծայրի մեջ բացվում են չորս միզային վոլորածո խողովակներ (Մալպիգյան անցքեր) (նկար 6, H.)։ Միջին աղիքը ամենամեծ տարածությունն է բռնում վորդի մարմնի մեջ (նկար 6, Td)։ Վորդը իսկապես մի տեսակ մեքենա չէ. կերակուր կլանելու և նյութեր ամբարելու համար, վորից այն ժամանակ, յերբ բջիջի բերանը կը սերեկվի և վորդը կը դառնա հարսնյակ, կը կազմվին հասակավոր մեղվի գործարանները։ Միջին աղիքը հազորգակցություն ունի առա-



Նկար 6

Չափոր աղիքը շատ կարճ է և փոքր ինչ սեղմված վերելից դեպի վայր։ Վերջին աղիքը գնում է հետույքի բացվածքից մինչև վորդի մարմնի 11-րդ ողակը՝ կազմելով նույն ժամանակ փոքրիկ հանգույց։ Կույր, փոքր ինչ լայնացած ծայրի մեջ բացվում են չորս միզային վոլորածո խողովակներ (Մալպիգյան անցքեր) (նկար 6, H.)։ Միջին աղիքը ամենամեծ տարածությունն է բռնում վորդի մարմնի մեջ (նկար 6, Td)։ Վորդը իսկապես մի տեսակ մեքենա չէ. կերակուր կլանելու և նյութեր ամբարելու համար, վորից այն ժամանակ, յերբ բջիջի բերանը կը սերեկվի և վորդը կը դառնա հարսնյակ, կը կազմվին հասակավոր մեղվի գործարանները։ Միջին աղիքը հազորգակցություն ունի առա-

ջափոր աղիքի հետ: Նրանց միացման կետում միջին աղիքի պատի մեջ մտնում է մի փոքրիկ ողակաձառն ծալք (նրկար 6, R.): Նա կատարում է փականի գեր, վոր արգելք է դառնում կերակրին հետագարձ կատարելու միջին աղիքից գեպի առաջավորը: Միջին և վերջին աղիքները գրանվում են մեկը մյուսի կողքին, առանց հաղորդակցություն ունենալու իրար հետ: Այս պատճառով ել վորդը կարող է կերակուր ընդունել և չարտադրել կղկղանք: Այն կերակրի մնացորդները, վոր ընդունել է վորդը իր կյանքի 5—6 որվա ընթացքում, մնում են միջին աղիքի մեջ: Այս պատճառով միջին աղիքը չափազանց ընդլայնվում է: Միայն վորդի կյանքի վերջում կղկղանքի մնացորդները միջին աղիքի պատի ձգման գորությամբ գուրս են մղվում գեպի վերջին աղիքը և այդ ժամանակ միջին և հետին աղիքներին միջնապատը պատուվում է ու կղկղանքը գուրս թափվում հետին աղիքից: Կղկղանքի գուրս թափվելուց անմիջապես հետո՝ վորդի աղիքային անցքը, Յանդերի ասելով, բոլորովին ծծվում է և փոխարինվում նոր աղիքային անցքով, վոր բաղկացած է լինում, ինչպես և առաջինը, յերեք իրար հետ չհաղորդակցող բաժանմունքներից: Այս վերջինից, յերբ սերեկած վորդը դառնում է հարմյակ, կազմվում է կատարելահասակ մեղվի աղիքային անցքը:

Վորդի աղիքային անցքի ներքին մակերևութը ծածկված է վանդակներով: Միջին աղիքում այդ վանդակները խորանարդի ձև ունեն և իրանց գուրս ընկած մասով ուղղված են գեպի աղիքի ներքին կողմը: Աղիքի ներքին մակերևութը ծածկող վանդակների վրա, արտաքին կողմից, կան փոքր քանակությամբ մկանային թելեր:

Ինչպես ասվեց քիչ առաջ, վորդերի համար կերակուր պատրաստում են աշխատավոր մեղուները: Այն հարցը, թե վորտեղ է պատրաստվում այդ կերակուրը, մինչև այժմ վերջնականապես չի վճռված: Ահավասիկ ինչ է գրում Յանդերը այդ բանի մասին. «վորդ անուցանելու հա-

մար պատրաստված կերակրի կամ «կաթնահյութի» ծագումը թքային գեղձերից, յես համարում եմ անվիճելի, չընայելով նրա մեջ պարունակված մեղրին և ծաղկափոշուն: Այն հավաստիացումները, թե թքային գեղձերը չափազանց փոքր են կաթնահյութի բավարար քանակություն պատրաստելու վորդերի կերակրման համար, անհիմն են: Գեղձերը առանց հասեմատությունների, ի հարկե, փոքր են, բայց յերբ համեմատելու լինենք նրանց մեղվի մարմնի հետ, պետք է ասենք, վոր գեղձերի մակերևութի ահագին է: Մի քանի գեղձեր 2 սանտիմետր յերկարություն ունեն, այսինքն յերկու անգամ ավելի յերկար են, քան մեղվի մարմինը»:

Պրոֆ. Կոժևնիկովը գրում է, ավելի շատ տվյալներ կան հոգուտ այն կարծիքի, վոր այսպես անվանված կաթնահյութի գլխավոր զանգվածը բաղկացած է մեղվի միջին աղիքից հետ բերած հյութից: Մեղուների թքային գեղձերի խիստ զարգացումը, Կոժևնիկովի կարծիքով, անհրաժեշտ է մարսելու համար այն կերակուրը, վոր ուտում են իրանք մեղուները, ինչպես նաև անհրաժեշտ է այն կերակրին, վոր հարկավոր է կաթնահյութի պատրաստության համար: Վորդերը կաթնահյութ ստանում են իրանց զարգացման առաջին որերում և հատկապես՝ աշխատավոր մեղուների և բոսերի վորդերը առաջին յերեք որվա ընթացքում ձվից գուրս գալուց հետո: Յևսելսկին հավատացնում է, թե բոսերի վորդերը սկսում են ստանալ վոչ կաթնահյութ, այլ ավելի քիչ աննդարար խյուս՝ միայն 5-րդ որվա վերջում: Մայրը աննգվում է կաթնահյութով 6 որվա ընթացքում:

Պլանտան մասնացույց է անում, թե մայրացվի վորդի սնուցումը կաթնահյութով տեվում է 7 որ: Այսպես ուրեմն՝ վորդերին կաթնահյութով կերակրելու ժամանակամիջոցին վերաբերյալ հարցը վերջնականապես չի պարզված:

Պլանտանը այսպես է վորոշում այն կաթնահյութի

բացատրութիւնը, վորով կերակրվում է մայրացուն.— ագոտային նյութեր (սպիտակուցային) 45,14<sup>0</sup>/<sub>0</sub>, ճարպ— 13,55<sup>0</sup>/<sub>0</sub>, շաքար (գլյուկոզ) 20,39<sup>0</sup>/<sub>0</sub>: Բոտերի վորգերը ստանում են փոքր ինչ այլ տեսակ կաթնահնարութիւն 4 որվա և հետագա որերի ընթացքում և հասկապես.

	Առաջին 4 որվա ընթացքում	4 որից հետո	Միջին թիվ
Ագոտային նյութեր	45,91 <sup>0</sup> / <sub>0</sub>	31,67 <sup>0</sup> / <sub>0</sub>	43,79 <sup>0</sup> / <sub>0</sub>
ճարպ	11,90 »	4,74 »	8,32 »
Շաքար (գլյուկոզ)	9,57 »	38,49 »	24,03 »

Այն կաթնահնարութի մեջ, վոր ստանում են բոտերի վորգերը իրանց կյանքի 4-րդ որից հետո, Պրանտայի հետագոտութիւններին նայելով, մեծ քանակութեամբ չմարսված ծաղկափոշի կա, իսկ այն կաթնահնարութը, վորով սնուցանում են աշխատավոր մեղովի վորգերը, նույնպես միանման չէ: Աշխատավոր մեղովի վորգերի կերակրման առաջին 4 որվա ընթացքում կաթնահնարութի, կազմութիւնն այսպես է.— ագոտային նյութեր՝ 53,38<sup>0</sup>/<sub>0</sub>, ճարպ՝ 8,38<sup>0</sup>/<sub>0</sub>, շաքար՝ (գլյուկոզ) 18,09<sup>0</sup>/<sub>0</sub>:

Չորս որ կերակրվելուց հետո՝ վորգերը ստանում են այսպիսի կաթնահնարութ.— ագոտային նյութեր՝ 27,87<sup>0</sup>/<sub>0</sub>, ճարպ՝ 3,69<sup>0</sup>/<sub>0</sub>, շաքար (գլյուկոզ) 44,93<sup>0</sup>/<sub>0</sub>: Ուրեմն աշխատավոր մեղուների կաթնահնարութի միջին կազմը կը լինի հետևյալը.— ագոտային նյութեր՝ 40,62<sup>0</sup>/<sub>0</sub>, ճարպ՝ 6,03<sup>0</sup>/<sub>0</sub>, շաքար՝ 31,51<sup>0</sup>/<sub>0</sub>: Աշխատավոր մեղուների վորգերին կերակրելու կաթնահնարութի մեջ ծաղկափոշի լինելու կամ չլինելու վերաբերմամբ հետագոտողների կարծիքները տարբեր են: Պրանտան պնդում է, թէ այդ կաթնահնարութի մեջ ծաղկափոշի չկա: Յեսսելսկին գրում է, թէ նա ընդհանրապես միշտ գտնում էր 4 որական վորգերի մեջ ծաղկափոշի և միայն մի անգամ պատահել է նրան

գտնել 5 որական վորգերի շատ քիչ քանակութիւն, վորոնց աղիքների մեջ չկար ծաղկափոշի: Կոժեվնիկովը պնդում է, թէ աշխատավոր մեղովի հասուն վորգերի աղիքային անցքը լիքն է ծաղկափոշով:

Մյուս կողմից, Կոժեվնիկովը յենթադրում է, որ վերոհիշյալ տարբերութիւնը մոր և աշխատավոր մեղովի վորգերի աննպատութեան մեջ այնքան էլ մեծ չէ\*), վոր միայն նրանով կարելի լիներ անմիջապես բացատրել մոր և աշխատավոր մեղովի ծագումը իր ամբողջական լրութեամբ: Աշխատավոր մեղովի վորգերի սեռական գործարանները շարունակում են իրանց անընդհատ զարգացումը նաև այն ժամանակ, յերբ սնունդը սկսում է վատանալ:

Կոժեվնիկովի այս կարծիքի հետ չէ կարելի չհամաձայնել: Միմիայն աշխատավոր մեղովի և մոր վորգերի կերակրի մեջ յեղած հարաբերութեամբ չէ կարելի բացատրել ընտանիքի այն կազմը, որ ունեն մեղուները:

Կերակրի այն քանակութեան մասին, վոր հարկավոր է աշխատավոր մեղովի վորգերի աննպատութեան համար, արդեն խոսել ենք առաջ:

\*) Յենթադրված տարբերութիւնը, Կոժեվնիկովի կարծիքով բացատրվում է այն բանով, որ Պրանտան տվել է վորգի և մոր կերակրի վաղ միանման վերլուծումներ: Մոր կերակրի վերլուծումը արած է միջին թվերով, առանց բաժանման հասակների, իսկ աշխատավոր մեղովի վորգերի կերակրի վերլուծումը արած է առանձին յերկու հասակների համար.

## II. ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

### I. Մեղուների գաղմանային կերակրումը կեռի բացակայության ժամանակ

(Կերակրումն ըստ հարկի)

Մեղուների կերակրումը տարվա գանազան ժամանակներին կատարվում է տարբեր նպատակներով: Առանձնապես կարևոր է կերակրումը գարնան ժամանակ, վորովհետև այդ կերակրումով ապահովվում է ընտանիքի բարեկեցությունը և մեղվապահական պարագամունքի արդյունավետությունը: Գարնանային կերակրումը պետք է կատարվի գարնան սկզբնական շրջանում, հենց վոր մեղուների ընտանիքի մեջ վորդեր յերեվան: Այս միջոցին, յեթե փեթակներում աշնանից չե թողնված մեղրի պաշարի համապատասխան քանակություն, մեղվապահը անհրաժեշտորեն պետք է ոգնություն հասնի մեղուներին: Համոզվելու համար, թե հարկավոր է արգյոր մեղվապահի ոգնությունը, վերջինս պետք է իմանա ճշգրտորեն իր մեղուների գրությունը: Հիշված նպատակով մեղվապահական գատաղը բերում հանձնարարվում է լսել մեղուներին՝ ականջը սեղմելով արկանոցին: Յեթե կը լսվի միայր հնչյուն, նման նվազալարի հնչյունին, գանշանակում է, թե մեղուները բարեհաջող վիճակում են: Յերբեմն պատահում է, վոր սեղվապահը չե լսում վոչ մի ձայն, այն ժամանակ պետք է ցուցամտաի ծալվածքով ամուր խփել փեթակի պատին: Յեթե մեղուները բարե-

հաջող են, նրանք բոլորը միասին՝ արձագանք կը տան հարվածին կարճատե բզոցոցով ու կը լսեն: Յեթե այդպիսի ձայն չլսվի, այլ ընդհակառակը՝ լսվի մի տեսակ շշուկ (հավանականաբար թևերի շարժումից), նշանակում է թե մեղուներին ոգնություն է հարկավոր—նրանք քաղցած են: Մեղվապահը պետք է կերակուր տա մեղուներին: Ամենալավ և ամենաբնական կերակուրը մեղուների կյանքի բոլոր շրջաններում՝ մեղրն է: Հացի մեղրը, վորպես կատարելապես հասուն և իր մեջ ավելորդ ջուր չպարունակող ու ավելի նվազ տրամադիր թթվելու, համարվում է ամենալավ կերակուրը: Յեթե տանը կա ցենտրաֆուգի թանձր շաքարացած մեղր, այդ դեպքում ավելի լավ է, ասում է Կորալլելվը, — ասաջ դարձնել նրան ջրալի, ավելացնելով մեղրի վրա փոքր ինչ ջուր (10 բաժակ մեղրին 1 բաժակ ջուր) և ապա մի քիչ յեփ տալ: Կերակրման համար գործ են ածում այդ մեղրն այն ժամանակ, յերբ նա բավականաչափ սառչի ու դառնա դուր, ինչպես նոր կլթած կաթը: Բայց, սովորաբար, մեղվապահները գարնան ժամանակ, վոչ մշտապես ունենում են սեփական մեղրի պաշար, այն ինչ գնել մեղր մեղուներին կերակրելու համար անհայտ մեղվապահներից՝ վտանգավոր է: Գնած մեղրի հետ կարելի չե հիփանդություններ բերել և վարակել մեղվանոցը: Բացի սրանից՝ գնած մեղրը շատ հաճախ լինում է, կեղծած, խառն դոշարի, կավճի և այլ նյութերի հետ: Վերջապես պետք է ի նկատի ունենալ, վոր մեղրը թանգ կերակուր է մեղուներին համար: Այս պատճառով, յեթե չը կա սեփական մեղր, ավելի լավ է կերակրել մեղուներին, այսպես անվանված՝ սառու շաքարով, վոր պատրաստվում է հետևյալ կերպով, — շաքարի հինգ մասի հետ վերցնում են մեկ մասն ջուր: Յեթ այդ շաքարաջուրը յեփ են տալիս այնքան, որ նա դառնա ձկուն և փխրուն, մի բան, վոր ճանաչվում է շաքարի ընդունակությունից ձգվելու (ճիլ—ճիլ լինելու): Յեթե շաքարաջուրը (սիրուրը) շատ ձգուն

ե և փափուկ, ու վոչ թե ամուր, պետք է յեփ տալը շարունակել: Յերբ շաքարաջուրը բոլորովին պատրաստ է, կաթսան կամ թասը, վորի մեջ յեփվում է նա, վերցնում են կրակի վրայից և սկսում են խառնել մինչև վոր շաքարաջուրը թանձրանա: Ապա շաքարաջուրը ամուսն են ավսեյի յերեսին փռած մի թերթ թղթի վրա: 20-30 բուպեյից հետո շաքարաջուրը կը պնդանա և պատրաստ կը լինի մեղուներին կերակրելու համար\*): Յեթե շաքարաջուրը բավարար չափով չի յեփվել, սառուշաքարը կպչուն կամ մածուցիկ կը լինի, իսկ յեթե նա յեփվել է շափից ավելի ու այրվել, ստացված սառուշաքարը փասակար կը լինի մեղուներին համար ու նորից յեփ տալով՝ նա ավելի լավ չի դառնա: Հաճախ սառուշաքարին ավելացնում են ալյուր, վորպեսզի վերջինս փոխարինի ծաղկափոշուն: Ալյուրը պետք է լինի բրնձի կամ սիսեռի և ավելացնվի մոտավորապես շաքարի քանակութեան  $\frac{1}{4}$ -ի չափ: Այսպիսի սառուշաքար էլ տըրվում է մեղուներին: Յերբեմնապես մեղվապահները կերակրում են մեղուներին տարվա այն ժամանակ մեղրով ու շաքարով հունցած խմորով, վոր պատրաստվում է այսպես, — վերցնում են հեղուկ կամ դեռ ևս չշաքարացած մեղր, նրա վրա ամուսն են մի քիչ շաքարավազ և լավ խառնում: Խմորը հունցում են պնդի, վորքան կարելի յե, այսինքն շաքարավազ ավելացնում են այնքան, վորքան կարող է խմորը տանել: Յեթե կա շաքարացած մեղր, առաջ

\*) Այդպիսի խորհուրդ տալ մեղվապահներին կարելի յեր վերջին պատերազմից առաջ, յերբ շաքարը կրկնակի ևժան էր, քան մեղրը, մինչ զի ալյուս մեղանում Անգրկովկասում, հակառակն է նկատվում — շաքարը կրկնակի թանց է, քան մեղրը, ուստի և մեր մեղվապահներին ավելի ձեռնառու է կերակրել մեղուներին այժմ մեղրով և վոչ շաքարով: Բայց վորպեսզի մեղվապահը համոզված լինի, որ պնած մեղրի հետ չի տարածի հիվանդութեաններ իր մեղվանոցում, պետք է մեղրը պնել այնպիսի մեղվապահից, վորի մեղվանոցը վարակված չի վոչ մի հիվանդութեամբ և առանձնապես փտախտով:

Ծանոթ. թարգմանչի

պետք է ջրալի դարձնել՝ դնելով կրակին և հետո սառնցնելով մեղրը՝ վարվել այնպես, ինչպես վարվում են հեղուկ մեղրի հետ: Վերջապես մեղուներին կերակրելու համար կարելի յե շաքարը գործադրել այսպես, — շաքարի գլխից (գլուխ-շաքար) պետք է սղոցով կտրել մի բոլորակ շերտ մի մասի հաստութեամբ, թըջել նրան ջրով ու տալ մեղուներին:

Բացի վազ դարնանից, առանձնապես կարևոր է ուշագրութեան դարձնել մեղուների կերակրման վրա՝ փեթակները ամարային տեղերը դնելիս:

Գարնանը, — արդարացի կերպով նկատում է Պետրովը, յեղանակը շատ հաճախ փոփոխական է լինում, տաք յեղանակին հաջորդում են ցրտեր և մինչև անգամ՝ գիշերային սառնամանիքները, վորոնք կործանարար ազդեցութեան են անում մեղրատու բույսերի վրա: Առանց դրան էլ հիշված բույսերը առատ չեն լինում տարվա այդ ժամանակին: Յերբ յեղանակը լավ է, մեղուները վոչ միայն մեղր են հավաքում, այլև փեթակի մեջ յերևում են շատ վորգեր: Կարելի յե համարձակ ասել, վոր մեղուներին համար դարնանը լավ բերքի բացակայութեան ավելի քիչ վտանգավոր է, քան այդ բերքի տատանումները առատութեան և կատարյալ դադարման սահմաններում: Նույնպիսի ցուցումներ դարնանային կերակրման նշանակութեան վերաբերմամբ տալիս են հարմնի մեղվապահներից *Կովանը*, *Լանգստրուտը*, *Լյուրենցկին* և ուրիշները: Վաղահաս ծաղիկները, ասում է *Կովանը*, մեղուներին տալիս են մեղր և նպաստում են փեթակի մեջ վորգերի քանակութեան ավելացմանը, սակայն բերքի դադարելուց հետո կարող է պատահել, վոր փեթակում քիչ մեղր լինի թե իրանց՝ մեղուների և թե վորգերի համար: Այդպիսի դեպքերում չափավոր կերակրումը կարող է նպաստել ընտանիքին՝ մնալու ծաղկյալ գրութեան մեջ, մինչ զի առանց կերակրման մի քանի օրվա ընթացքում կարող է այնպիսի փաստ

առաջանալ, վոր անկարելի լինի ուղղել շատ շաքարձների ընթացքում: Մեղվապահական գործնական կյանքում, գրում ե Լանգստրոտը, քիչ հանգամանքներ կան, վորոնք ավելի մեծ նշանակութիւն ունենային, քան կերակրումը, բայց և այնպես՝ վոչ մի բան այնպես վատ չե կատարվում, ինչպես կերակրումը: Գարնանը՝ մեծ քանակութեամբ վորդերը բազմացնելու հանգամանքից գրգված՝ մեղուները առատ կերակուր են պահանջում և յեթե այդ կերակուրը չկա, վոչնչանում են, թեև նրանք կարող էյին փրկվել չնչին աշխատանքի և դրամի գործադրութեամբ: Մեղվապահին, ասում ե Լյուրենցկին, անհրաժեշտ ե ունենալ վաղ ույժի յեկած ընտանիքներ, սա յե մեղվանոցի արդյունավետութեան գլխավոր պայմանը:

Իսկ ընտանիքի ույժը առաջանում ե այն ժամանակ, յերբ մեղուները առատ կերակուր ունին: Կան և ուրիշ, նույնանման ցուցումներ մեղուներին կերակրելու անհրաժեշտութեան մասին՝ փեթակները ամարային տեղերում գնելուց հետո:

Մեղուների կերակրումը տարվա վերոհիշյալ յեզանակին պետք ե կատարել այսպես: Յերեկոյան, այն որը, յերբ փեթակները ձմերային անդերից դուրս կը տարվեն և կը գետեղվեն ամարային տեղերում, կամ հետևյալ որերը, յեթե յեզանակը լավ ե, կարելի յե տալ ամեն մի ընտանիքին մեկ ֆունտի չափ գոլ մեղր կամ թանձր շաքարաջուր: Այսպիսի շաքարաջուր պատրաստելու հասար վերցնում են 2 մասն շաքար և մեկ մասն ջուր: Խառնուրդը պետք ե յեփել հանդարտ կրակի վրա և անպատճառ մաքուր ամանում, որինակ կալից հղկած պուտուկների կամ եմալով ծածկված թասերի ու կաթսաների մեջ, վորպեսզի կերակուրը անհաճո համ չստանա:

Յեփելու ժամանակ, քանի շաքարը չե լուծվել, պետք ե շաքարաջուրը հաճախ խառնել, վոր չայրվի: Շատ մեղվապահների խորհուրդ են տալիս ինչպես մեղրի, այնպես

եւ շաքարաջրի վրա ավելացնել ուռիտական (սալիցիլյան) թթվուտ: Թթվուտը ավելացնելում ե շաքարաջրի յեփման ժամանակ: Կորարլիվը խորհուրդ ե տալիս այդ դեպքում վարվել այսպես, — այն ամանի մեջ, վորով յեփվում ե շաքարաջուրը, պետք ե ամել շաքարավազ, հետո լցնել ջուր և վերջապես ուռիտական թթվուտը: Թթվուտը պետք ե վերցնել  $1\frac{1}{2}$  մսխալ մի փութ շաքարի և վոչ շաքարաջրի չափով: Նախորոք թթվուտը պետք ե լուծել կես ողբեածակ սպիրտի մեջ: Կշուել թթվուտը մսխալներով, ասում ե Կորարլիվը, կարելի յե ամեն մի կրպակում: Ծայրահեղ դեպքում  $\frac{1}{8}$  ֆունտը աչքի չափով կարելի յե բաժանել 12 հավասար մասերի, վորոնցից ամեն մեկը կը լինի մեկ մսխալ: Ուռիտական (սալիցիլյան) թթվուտ ավելացնել մեղուների կերակրի վրա խորհուրդ են տալիս շատ մեղվապահներ և առանձնապես այն ժամանակ, յերբ մեղուները վարակված են փտախտով կամ նոզեմա կոչված հիվանդութեամբ, յենթադրելով, վոր թթվուտը՝ մանելով մեղուներին մարմինների մեջ, կսպանե հիվանդարեր միկրոօրգանիզմը:

Չարինի փորձերը ցույց տվին, վոր ուռիտական թթվուտի ավելացումը շաքարաջրի վրա վոչ միայն ոգտակար չե, այլև ունի իր բացասական կողմերը: Թթվուտը նպաստում չե ամենեկին շաքարի փոխարկմանը մեղրի, այլ ավելի ճիշտն առած՝ արգելք ե հանդիսանում նրան: Ապա մեղուները հրաժարվում են վերցնել այնպիսի շաքարաջուր, վորի մեջ ուռիտական թթվուտ ե խառնած  $0,30\%$  չափով: Վերջապես՝ ուռիտական թթվուտը, ասում ե պրոֆ. Կարլուկովը, թունավոր ե, բայց շատ նվաղ չափով ախտահանիչ հատկութիւն ունի, ուստի հաղիվ թե մեղվապահների գործադրած բազադրութեամբ կարողանա վորեն ներգործութիւն ունենալ այն միկրոօրգանիզմի վրա, վորոնք մեղուների մեջ հիվանդութիւններ են առաջացնում: Այդպիսով ուռիտական թթվուտի ավելացումը շաքարաջրի վրա պետք ե համարել մերժված:

Բացի ուժիտական թիֆլուսից մեղվապահական ձեռնարկներում խորհուրդ է տրվում ավելացնել մեղունների գարնանային կերակրանյութի վրա մրջնային թիֆլուսի 10% լուծվածք, — մի սեզանի (հացի) գզալ թիֆլուս՝ 6 բաժակ կերակրանյութի վրա կամ ֆորմալին — 6 կաթիլ ֆորմալին կերակրի յուրաքանչյուր բաժակի վրա: Մեղունների կերակրի վրա ավելացնելու նյութերի դերը գիտնականորեն չէ պարզված: Նրանց նշանակությունը վրա մասնացույց են լինում միմիայն գործնական մեղվապահները:

Վերևում նկարագրված գարնանային կերակրումից հետո մեղվապահը պետք է ստուգե, թե մեղունների ամեն մի ընտանիքի մեջ վորքան մեղր է մնացել ձմերային պաշարից: Բնական պայմաններում գտնվող ընտանիքի համար հարկավոր է գարնանը ունենալ 5—10 ֆունտ պաշար՝ կախված այն հանգամանքից, թե յերբ կը գա բնական բերքի ժամանակը: Յեթե այգպիսի պաշար չկա, ուրեմն պակասած քանակությունը պետք է լրացնվի կերակրումով: Կերակրումը կարող է լինել դանազան: Քանի դեռ չեն սկսել ծաղիկել մեղրատու բույսերը և մեղունների թռիչքը լավ չէ կատարվում վատ յեղանակի պատճառով, ավելի լավ է տալ մեղուններին պահեստի շրջանակներ սերեկած մեղրով: Այգպիսի շրջանակներ մեղունների բնի մեջ դնելուց առաջ՝ մի քանի մեղվապահներ խորհուրդ են տալիս՝ փոքր ինչ տաքացնել շրջանակները տաք սենյակում և բաց անել սերեկի մի վորտ մասը: Ապա պետք է կերակրել մեղուններին մեղրով, ոտուշաքարով, շաքարաջրով, պատրաստելով այդ կերակրանյութերը այնպես, ինչպես նկարագրվեց վերևում: Կերակրանյութերը պետք է տալ համեմատաբար մեծ բաժիններով — 3—4 ֆունտ մի անգամից, վորպեսզի հաճախ չանհանգստացնենք մեղուններին: Կերակրանի ժամանակ մեղրի և շաքարի մեջ ընտրություն անելիս՝ նախապատվությունը միշտ պետք է տալ սեղրին, յեթե նա լավ հատկություն ունի: Բանն այն է, վոր սեղ-

վի մարմինը գարնանը մեծ աշխատանք է կատարում վորդեր կերակրելու և փեթակի մեջ վորդերի զարգացման անհրաժեշտ ջերմություն պահպանելու համար: Յեթե մեղուններին գարնանը, իբրև կերակրանյութ, տրվում է շաքար մեղրի փոխարեն, այդ դեպքում մեղվի մարմնի կուրուստը սովորանում է՝ շաքարը մեղր դարձնելու պատճառով, մանավանդ՝ յերբ մեղուններին կերակրում են սառուշաքարով, վորը նախապես նրանք պետք է աշխատեն լուծել: Գարնան ժամանակ մեղունների մարմնի կատարած աշխատանքը հազիվ թե կարելի լինի բնական համարել: Սակայն մյուս կողմից՝ յերբ գարնանը մեղր չկա մեղվապահի տանը, յերբ մեղրը թանկ է շուկայում և յերբ վերջապես գնելիս՝ կարելի յե ստանալ վատ հատկություն մեղր, ինչպես դրա մասին քիչ առաջ արդեն ասացինք, — այս բոլոր դեպքերում մեղվապահը վերջ ի վերջո հարկադրված է լինում գարնանը դիմել շաքարի գործածությունը մեղրի փոխարեն: Վերոհիշյալ գարնանային կերակրման ժամանակ յերբեք չպետք է տալ մեղուններին ջրալի կերակուր և վոչել վորբ բաժիններով, ինչպես յերբեմն Կորարլուի ասելով անում են մեղվապահները ծառակոճղի փեթակներում շաղ տալով մեկ-յերկու գզալ մեղր մեղրահացերի և փեթակի պատերի վրա: Ջրալի կերակուրը առաջացնում է կղկղանքի սովելի արագ գատարկում: Յեվ վորովհետև գարնան ցուրտ որերին մեղունները չեն կարող դուրս թռչել փեթակից բնական կարիքը կատարելու համար, նրանք հարկադրված են լինում կեղտոտելու մեղրահացերը փեթակում: Իսկ այն մեղունները, վորոնք տեմնելով ջրալի մեղրի կաթիլները բջիջներում և համարելով այդ բանը մեղրաբերքի սկսվելու նշանացույց, դուրս են թռչում փեթակից և հաճախ ահազին բաղմունքամբ վոչնչանում են ցրտից: Բացի սրանից՝ յերբ հացերի վրա ջրալի մեղր են շաղ տալիս, հացերը թրջվում ու խոնավանում են, մեղունները աղատվում և բունն էլ ցրտում է:

ինչ վերաբերում է մեղուների կերակրի մյուս բաղ-  
կացուցիչ մասին՝ ծաղկափոշուն, պետք է ասենք, վոր  
մեղուները դարձան ժամանակ շատ դեպքերում ապահով-  
ված են լինում ծաղկափոշով, վորովհետև նախ՝ նախըն-  
թաց ամառվա և աշնան ամիսներում նրանք հավաքած են  
լինում ծաղկափոշու բավականաչափ պաշար և ապա ծաղ-  
կափոշու հարկավոր քանակությունը նրանք հավաքում են  
գարնանը վաղ ծաղկող բույսերից: Բայց այն դեպքերում,  
յերբ գարնանը մեղուները չունին ծաղկափոշի աչա կամ  
այն պատճառով, մեղվապահը հարկադրված է լրացնել այդ  
պակասը կերակրման միջոցով: Վորպես ծաղկափոշուն  
փոխարինող կերակուր գործ են անում բրնձի, յեզիպտա-  
ցորենի կամ հնդկացորենի (гречиха) ալյուր: Ալյուրի,  
վորպես մեղուների կերակրի մասին, Պրոկոպովիչը ասում  
է հետևյալը, — 1. սննդվելով ալյուրով՝ մեղուները ավելի  
շատ են վորդ բազմացնում, ուստի և գարնանը ավելի  
վաղ են ուշժի գալիս. 2. ավելի լավ է պահպանվում բն-  
տանիքների ուշժր, վորովհետև ավելի քիչ մեղուներ են  
վաճնչանում ծաղկափոշի վորոնելու համար դաշտ թռչելիս.  
3. մեղուները ալյուր կրելով փեթակը, սակավ տրամադիր  
են լինում գողության: Բոլոր տեղեկություններով՝ մեղու-  
ները դադարում են ալյուր կրելուց՝ հենց վոր յերեման են  
գալիս ծաղկափոշի ավող ծաղիկներ: Փորձերը՝ հարկադրե-  
լու մեղուներին ավելի շատ ալյուր վերցնել՝ վորդ բազ-  
մացնելու նպատակով փեթակում, վոր մի դրական հետե-  
վանքի չհասցրին: «Յես տրամադիր եմ կասկածելու, — աս-  
ում է Բոլորը, — վոր մեղուների այն ընտանիքները, վո-  
րոնց զանազան մեղուներով զրավում են ավելի ալյուր  
վերցնելու, ավելի ուժեղ լինելին, քան իրանց կամրին և  
ուշժերին թողնված մեղուները»: Ալյուրը արվում է մեղու-  
ներին կամ սառուչաքարի հետ միասին, ինչպես ցույց  
արվեց վերևում, կամ առանձին, վորի մասին կը խոսենք  
քիչ հետո: Մեղուների ընտանիքի համար հարկավոր ալյու-

րի քանակությունը կախված է այն բանից, թե արդյոք  
վորքան մոտիկ կամ հեռու յե բույսերից ծաղկափոշի հա-  
վաքելու ժամանակը: Լանգստրոտը ցույց է տալիս, վոր  
մի քանի դեպքերում մեղուների մի ընտանիք գործ է ան-  
ծել 2 ֆունտի չափ ալյուր: Մեղուները ալյուրը տեղավո-  
րում են բջիջների հատակում գեղեցիկ ու կանոնավոր  
կերպով, ինչպես բնականորեն հավաքած ծաղկափոշի: Զի-  
շայրը հետևյալ փորձն է արել ալյուրի վերաբերմամբ: Նա  
պատրաստել է սիսեռի ալյուրից և շաքարաջրից խմոր ու  
քսել է հացերին մեղուների այնպիսի ընտանիքի մեջ, վոր  
թուլացել էր ծաղկափոշու պակասությունից: Յերկու ժա-  
մից հետո յերևաց, վոր մեղուները վերցրել են շաքարաջրի  
(սիրուպի) ավելցուկը, իսկ ալյուրը տեղավորել են բջիջնե-  
րի հատակում: Հետևյալ որը ալյուրի մեծ մասը կերված  
էր: Վերևում արդեն ցույց արվեց, վոր մեղուներին կերա-  
կրելու համար պետք է վեր առնել բրնձի, յեզիպտացորե-  
նի, վարսակի կամ հնդկացորենի ալյուր, բացի այն տեսակ-  
ներից, վորոնք բռնում են վորտնի սերմից: Աստուտի  
համեմատական փորձերը ցույց ավին, վոր ալյուրի այդ  
տեսակները ավելի քիչ քանակությամբ ստանձանցութ են  
պարունակում, մի բան, վոր չկա ծաղկափոշու մեջ: Ընդ-  
հակառակը՝ ցորենի և հաճարի ալյուրը պարունակում է  
իր մեջ սոսնձանյութ, ուստի և ավելի նվազ չափով պի-  
տանի է ծաղկափոշուն փոխարինելու համար:

2. Կերակրումն մեծ քանակությամբ ձագ (վարդի) սահալու համար

Գարնանային կերակրումից, վոր առաջանում է ամեն-  
որյա կերի բացակայությունից մեղուների ընտանիքում,  
կամ այլ խոտքով՝ հարկադրական կերակրումից մեղվա-  
պահները զանազանում են այսպես անվանված՝ վորդ ստա-  
նալու կերակրումը, վոր յերբեմն կոչվում է նաև սպեկու-  
լյատիվ կերակրում:

Ֆրանսիացի մեղվապահ Լայանսը կերակրման հիշյալ յեղանակը այսպես է ձևակերպում: Յերբեմնապես, ասում է նա, մեղունների ընտանիքը կերակրում են տարվա վորոշ ժամանակ փոքր բաժիններով փոշ նրա համար, փոր փեթակը աղքատ լինել կերակրի պաշարով, այլ փորպեսզի ստիպեն մեղուններին յենթադրել, թե բերքի ժամանակը հասել է արդեն, մինչդեռ փեթակի շրջակայքում բնությունը դեռ փոշինչ չէ տալիս: Այդ բանն անում են նրա համար, փոր արհեստական միջոցով հարկադրեն մորը ավելի առատ ձու գնելու: Այս միջոցը, Լայանսի ասելով, կարող է և ոգտակար լինել, և անուգուտ և մինչև անգամ փնտաակար, փորովհետև ընդհանրապես անկարելի յե նախատեսել, թե փոր պայմաններում հիշված կերակրումը կարող է լավ կամ վատ լինել, ուստի և նրա գործադրությունը մշտապես կապված է փորոշ համարձակության (րիսկի) հետ: Վորպեսզի կարելի լինի հաջողություն հուսալ արհեստական կերակրումն գործադրելուց, Լայանսը ցույց է տալիս հետևյալ պայմանները. — ա) հարկավոր է, փոր կերակրման ժամանակ բերք լինի բնության մեջ և փոր այդ բերքը կարողանան ոգտագործել մեղունները դուրս յեկած փորդերին կերակրելու համար. բ) պետք է վստահ լինել, փոր կերակրման շրջանում չեն գա ցուրտ որեր, յերբ մեղուններն ստիպված են լինում իրար սեղմվելու փեթակում: Վորդերի մի մասն այդ դեպքում բաց կրմնա է կոչնչանա: Բացի սրանից՝ այն մեղուններին, փորոնք դուրս են թռչում փեթակից ցուրտ յեղանակին, նույնպես մահ է սպասում: Նկարագրված կերակրումը մեծ քանակությամբ փորդեր առաջացնելու նպատակով, ասում է Լայանսը, փորպես մի միջոց, փոր հիմնված է անվստահության և վստահների վրա, պետք է բոլորովին մերժվի:

Ռուս մեղվապահ Փեմշուժնիկովը ասում է, թե մեղունների կերակրումը փորդեր առաջացնելու համար պատշաճավոր հետևանքներ է տալիս հետևյալ գլխավոր պայ-

մաններում. ա. յերբ փեթակում կա թանձր մեղրի բավարար պաշար, բ. յերբ կերակուր են տալիս մեղունների թրոհիչքի համար նպաստավոր յեղանակին և գ. յերբ կերակրումն սկսում են իր ժամանակին: Կերակրումը փորդ ըստանալու նպատակով, նույն Փեմշուժնիկովի ասելով, դրդում է մեղունների ընտանիքին յեռանդուն կերպով մեծ քանակությամբ փորդեր բազմացնելու և դրանով տանում է զեպի փեթակի պաշարների արագ սպառումն: Յեթե այդպիսի պաշար չկա, մեղունները հարկադրված են լինում դուրս թափել բջիջներից փորդերին և յենթարկվել քաղցի հետևանքներին: Ջրալի կերակուր դնելը փեթակի մեջ ստիպում է մեղուններին դուրս թռչել փեթակից՝ ինչ յեղանակ էլ փոր լինի: Յերբ յեղանակը նպաստավոր չէ թոխչքների համար, ահազին քանակությամբ մեղուններ են փոչնչանում, ընտանիքը թուլանում է և փորդերը փոչնչանում են ցրտից՝ մընալով չծածկված: Վերջապես յերբ մեղվապահն ուշ է ըսկսում կերակրումը, ուշանում է նաև ընտանիքի զարգացումը: Ընտանիքները կարող են կատարելապես ուժի գալ զլխավոր բերքի վերջում, փորը այդ դեպքում կը մնա շոգտագործված և մեղունները չեն կարողանա մեղրի բավարար քանակություն հավաքել փոշ միայն մեղվապահի, այլ և իրենց համար: Սոփորարար մեղվապահական ձեռնարկներում ցույց է տրվում, թե փորդեր ստանալու նպատակով կատարվող կերակրումը պետք է սկսել 35 սր ձագ տալու ժամանակամիջոցից առաջ, փոր լինում է գլխավոր և յերբեմն նաև յերկրորդական բերքի սկզբում, Բայց այդպիսի ցուցումը կերակրման ժամանակի մասին փորդ ստանալու նպատակով փոշինչ չի տալիս սկսնակ մեղվապահին, փոր դեռ էս ճշտարտությամբ չգիտե, թե իր տեղում յերբ են ձագկում մեղրատու բույսերը: Մյուս կողմից վերոհիշյալ խորհրդից փոշ մշտապես կարող է ոգտվել նաև հմուտ մեղվապահը, փորովհետև գլխավոր բերքի ժամանակի գալուստը, միևնույն տեղում կախված է տված տարվա ողբերութա-

բանական պայմաններէց: Այս հարցում մեղվապահին կարող են ոգնել միմիայն սեփական բազմամյա դիտողութունները յուրաքանչյուր տարվա ճշգրիտ տվյալներով:

Սրանք են վորդերի մեծ քանակութիւնն ստանալու նպատակով կատարելիք կերակրման դժվարութիւնները: Մյուս կողմից չկան ճիշտ ցուցմունքներ վերոնշխարհ կերակրման նշանակութեան վերաբերմամբ մեղունների ընտանիքի համար: Հայտնի ուսուցողական — մեղվապահ Յուշկով քահանան հաղորդում է, վոր մեղունների կերակրումը նրա տեղում, Սարկովի նահանգում, ապրիլ ամսին տալիս է ամենահաջող նեակները: Ստացվում են ուժեղ ու լավ ձագեր տվող ընտանիքներ: Կերակուրը տրվում է որամեջ բոլոր ընտանիքներին:

Քսան տարվա փորձով մենք իմացանք, Յուշկովի խօսքերով ասում է Սարկովի մեղվապահներից մեկը, վոր ապրիլը ծնում է մեղուններ, մայիսը — ցող, իսկ հունիսը — մեղր:

Բուսակովիչը վորդ բազմացնելու նպատակով, գարնանային կերակրման նշանակութիւնը պարզելու համար կատարել է հետևյալ փորձերը Տուլայի նահանգում: Գարնանային կերակրման համար նա ընտրել էր 12 զույգ սիաման ընտանիքներ, վորոնցից կես մասը կերակրվում էր, իսկ մյուս կեսը չէր կերակրվում: Կերակուրը՝  $\frac{3}{4}$  ֆունտի քանակութեամբ ամեն մի ընտանիքի համար՝ տրվում էր ինն որվա ընթացքում, ապրիլի 27-ից մինչև մայիսի 21-ը: Հետևանքն այն յեղով, վոր նկատելի գանազանութիւն չեղևաց վորդերի քանակութեան վերաբերմամբ վոչ մեկ և վոչ մյուս խմբերի ընտանիքների մեջ, վորոնք յենթարկվել էին փորձի: Գեո այդ քիչ է. — այն ընտանիքները, վորոնք չէին կերակրվում, տվին իբրև ձագ, ամեն մի ընտանիքից, միջին թվով, մեկ ֆունտ ավելի մեղուններ: Արդյունքը թե մեկ և թե մյուս ընտանիքներից վերջնական գումարով գուրս յեկով համարյա հավասար: Կերակրված ընտանիքները տվին, միջին թվով, 102 ֆունտ

ծոր-մեղր. իսկ չկերակրվածները — 101 ֆունտ: Նույնը հաղորդում է և ամերիկայի մեղվապահ Միլլերը: «Յես յերբեք վոչինչ չեմ շահել, — ասում է Միլլերը, — գարնանը յեռանդուն կերպով իմ մեղուններին կերակրելուց՝ վորդ բազմացնելու համար: Ընդհակառակը՝ հենց այս պատճառով յես միշտ կորցրել եմ վորդերի մի մասը՝ աշխատելով անժամանակ բազմացնել նրանց»:

Վերջին ժամանակ այս հարցի վերաբերմամբ կատարվում էին փորձեր Տուլայի մեղվապահական փորձական կայարանում: Փորձերի հետևանքների հաշիվը չէ տպագրված: Նայելով այն կցկաուր տեղեկութիւններին, վորոնք հասել են մեզ փորձերի հետևանքների մասին, հարցը բնայեղևութին, լուծված է այսպէս, — կերակրումը վորդ բազմացնելու նպատակով մեկ տեղում, շնորհիվ նրան հատուկ պայմանների, սենի նշանակութիւնն, իսկ այլ տեղերում չունի:

Ընդհանրապէս ավելի նեշտ կը լիներ մեղուններին կերակրելու հարցը՝ վորդերի մեծ քանակութիւնն ստանալու համար՝ այսպէս ձևակերպել, — Թ, գարնանը պետք է կերակրել մեղուններին միայն այն ժամանակ, յերբ նրանք այս կամ այն պատճառով բերք չեն հավաքում, այսինքն յերբ անակնկալ կերպով ցուրտ որեր են գալիս, յերբ տվյալ տեղում վորեւ պատճառով չկան ծաղիկոց բույսեր, յերբ ծաղիկները չեն արտադրում նեկտար և այլն: Թ. կերակրել պետք է միայն թույլ ընտանիքներին:

Վորդերի բազմութիւնն ստանալու նպատակով տված կերակրի կազմի վերաբերմամբ այսպէս են խորհուրդ տալիս վարվել: Կերակրման սկզբում Յուշկովը խորհուրդ է տալիս թույլ ընտանիքներին տալ անխառն գոլ մեղր, իսկ միջակ և լավ ընտանիքներին՝ կիսով շափ ջրի հետ խառնած մեղր: Ժեմձուժնիկովը ասում է, թե կերակրման ըսկզբում ընդհանրապէս պետք է տալ ավելի թանձր կեր, իսկ հետո ջրալի: Տրուրնիկովի կարծիքով կերակրման ա-

ոսջին նվագներին պետք է տալ շաքարաջուր՝ բաղկացած հավասարաչափ քանակութեամբ շաքարից և ջրից, իսկ հետո ավելի ջրալի շաքարաջուր՝ բաղկացած մի մասն շաքարից և 2 մասն ջրից: Պետրովսկ. գյուղատնտեսական ակադեմիայի մեղվանոցում շատ տարիների ընթացքում գործադրվում է Տրուբնիկովի վերոհիշյալ խորհուրդը: Շաքարաջուրը պատրաստվում է այնպես, ինչպես հիշվեց վերևում:

Այն կերակրի քանակութեան վերաբերմամբ, վոր տրվում է մեղուներին վորդ բազմացնելու համար, գանազան մեղվապահներ վոչ բոլորովին միանման ցուցումներ են տալիս: *Բերտրամի* ասելով՝ կերակրումը պետք է սկսվի  $\frac{1}{4}$  ֆունտից ամեն մի ընտանիքի համար: Կերակուրը ըսկզբում արվում է յերկու կամ յերեք ուր մի անգամ յերեկոյան, ապա, յերբ յեղանակը կսկսե լավանալ, իսկ ընտանիքները զարգանալ, կերակրի բաժինները պետք է մեծացնել: Ի հարկե, անհրաժեշտ չէ, — ասում է *Բերտրամը*, — վոր մեղվապահը հարկադրե իրան ամենայն ճշտութեամբ կերակրելու մեղուներին, ինչպես անասունների: Կարևոր է միայն, վոր մեղուները ժամանակ առ ժամանակ կերակուր ստանան, յեթե վոչինչ չկա բերելու գաշախց: Ամբիկայի մեղվապահները խորհուրդ են տալիս յուրաքանչյուր ուր  $\frac{1}{4}$ — $\frac{1}{3}$  ֆունտ կերակուր տալ ամեն մի ընտանիքին: *Գրավենհորստը* գերմանական փոքրիկ փեթակներին խորհուրդ է տալիս կերակրել 2—3 գդալ կերով յուրաքանչյուր 3 ուր մեկ անգամ: Թույլ ընտանիքների համար, ասում է *Գրավենհորստը*, այդ բաժինը պետք է ավելացնել՝ նայելով թե վորքան պաշար կա փեթակում և վորքան ուժ ունի մի վորոշ ընտանիք:

Ըստ *Պրոկոպովիչի* ընդհակառակը՝ թույլ ընտանիքները պետք է ստանան  $\frac{1}{4}$ — $\frac{3}{4}$  ֆունտ 24 ժամվա ընթացքում, միջակները — 1 ֆ. —  $2\frac{1}{2}$  ֆ. և գորեղները —  $1\frac{1}{2}$  —  $2\frac{1}{2}$  ֆունտ:

*Լյուրենեցկին* կերակրի նորմալ չափ համարում է  $\frac{1}{10}$  —  $\frac{1}{8}$  ֆ. ամեն մի ընտանիքին: *Մոլիկը* անհրաժեշտ է համարում տալ ընտանիքներին՝ զրգելու համար մորը ձուգնելու՝ մեկ ֆունտից քիչ ավելի կերակուր, բաժանելով այդ կերակուրը յերկու կամ յերեք ուրյա մասերի: *Բուսլերովի* կարծիքով՝ հիշված նպատակին հասնելու համար պետք է կերակրել մեղուներին՝ տալով ամեն մի ընտանիքին 3—4 ֆունտ մեղր:

Ընդհանրապես վորդեր բազմացնելու նպատակով տրված կերի քանակութեանը պետք է կախված լինի այն ընտանիքների ուժից, վորոնք կերակրվում են, և ապա բնական մեղրաբերից կերակրման ժամանակաշրջանում: Առատ կերակրումը ավելի ժամանակին կարող է վոչ միայն սղտակար չլինել, այլ և թուլացնել ընտանիքների ուժը:

Յերբ կերակուրը չափից ավելի յե, մեղուները կազող են նրանով լցնել այն հացերը, վորոնց մեջ մայրը պետք է ձուգնե, և այսպիսով տեղ չի մնա ձագ հանելու: Հետաքրքրական է նկատել, վոր զարնանային առատ բերք ավող անգերում մեղուների ընտանիքները առանձնապես ուժեղ չեն լինում գլխավոր բերքի նախորդակին: Այդ փաստը հատկապես բացատրվում է նրանով, վոր մայրերն այս գեպքում բավականաչափ հացեր չեն ունենում ձուգնելու համար:

Վորդ բազմացնելու նպատակով կատարվող կերակրման ժամանակը, ինչպես արդեն ասացինք, կախված է գլխավոր բերքի զարու միջոցից ավելի անգում, ինչպես նաև ավելի տարվա ողերևույթաբանական պայմաններից: *Տրուբնիկովը* մասնավորապես Տվերի նահանգի վերաբերմամբ այդպիսի ժամանակ համարում է վոչ վող քան մայիսի յերկրորդ շաբաթը և հաճախ նույնիսկ յերրորդ շաբաթը: *Բուտկևիչը* Տուլայի նահանգի համար այդ ժամանակը հաշվում է ապրիլի վերջից: *Յուզկովը* Խարկովի նահանգի համար — մոտավորապես մայիսի 9-ը:

Կերակրման տևողութիւնը լինում է յերկու շաբաթից մինչև մի ամիս՝ նայելով թե յերբ կսկսվի գլխավոր բերքը: Սովորաբար մեղուները սաստիկ քաղցի յեն յեն-թարկվում այն միջոցին, յերբ այգիներում ծառերը ծաղկաթափ են լինում և այդ քաղցը տևում է մինչ այն ժամանակ, յերբ սկսում է ծաղկել սպիտակ կորնկանն և մանանեխը: Այնտեղ, ուր կա անտառ, այգալիսի քաղց տեղի չի ունենում, վորովհետև անտառում մեկը մյուսից հետո սկսում են ծաղկել ծառերի միջքանի տեսակները: Յըրտաշունչ և հողմախառն յեղանակին կերակրումը շատ կարևոր է:

Սամար հարկավորվում է կերակրել մեղուններին արտակարգ պայմաններում, յերբ վորեւ պատճառով այնտեղ, ուր կան մեղուններ, բերք չի լինում:

Մարտոսսիայի մի քանի տեղերում, Կորաբլեի ասելով, շատ հաճախ բերք չէ լինում հունիսի սկզբից մինչև գլխավոր բերքը, վոր ստացվում է հնդկացորենից (гревуха) հուլիսի յերկրորդ կիսին: Բերքի բացակայութեան ժամանակ կարիքը հարկադրում է կերակրել մեղուններին: Կերակուրը առանձնապես անհրաժեշտ է նոր դուրս յեկած ձագերի համար:

Կերակրման համար վեր են առնում շաքարի կամ մեղրի և ջրի համասար մասեր և կամ մի մասն շաքարի կամ մեղրի հետ խառնում են յերկու մասն ջուր: Այսպիսի շաքարաջուրը պետք է յեփ տար: Կերբ պետք է տալ միանգամից, 2—3 ֆունտ ամեն մի ընտանիքին:

3. Մեղունների աւանային կերակրումը ձմեռվա կամար.

Մեղունների աշնանային կերակրումը տեղի չէ ունենում հետևյալ պայմաններում.—

1. Յերբ մեղունները չեն համարել իրենց համար կերակրի անհրաժեշտ պաշար կամ թե համարել են վատ

հատկութեան պաշար՝ այսպես անվանված «գազպինից» (մանանայից):

2. Յերբ մեղվապահը կամենում է ավելի արդյունք ստանալ մեղվանոցից՝ մեղրի մի մասը, վոր պետք է թողնել ձմրան համար, փոխարինելով շաքարով:

3. Վերջապես աշնանային կերակրումը կարևոր է մեծ քանակութեամբ ջանել մեղուններ ստանալու համար ձմեռնադեմին: Դուրս է գալիս, վոր ջանել մեղունները ըստ յերևույթին ավելի գիմացկուն և կայուն են նողեմա կոչված հիվանդութեան դեմ, վորը յերբեմնապես վոչնչացնում է մեղունների ընտանիքները մեծ քանակութեամբ:

Աշնանային կերակրումն սկսելուց առաջ՝ մեղվապահը ամենից առաջ պետք է հավաստիանա, թե ինչպիսի մեղր ունեն մեղունները,—արդյոք իսկական մեղր է նրանց ունեցածը, թե այսպես անվանված «գազպինային» մեղր (մանանա):

Մեղրը գազպինից, կամ այլ կերպ ասելով, գազպինային մեղրը և կամ մեղրանման ցողը իր ծագմամբ լինում է բուսական կամ կենդանական (ծառատեղերի կղզնուկը): Նա յերևան է գալիս բույսերի տերևների կամ կղանքը: Նա յերևան է գալիս բույսերի տերևների կամ այլ մասերի վրա, իբրև կաթիլներ, մանավանդ շոգ որվա յերեկոյան՝ չորային յեղանակի ժամանակ: Այն ծառերը, վորոնք արտադրում են գազպին, հետևյալներն են.—կողմորոնք արտադրում են գազպին, կամ մանանա լինում է նույնպես ուրիշները: Գազպին կամ մանանա լինում է նույնպես մի քանի խոտաբույսերի տերևների վրա: Իր բաղադրումի մեջ գազպինը ունի համեմատաբար մեծ քանակութեամբ այնպիսի նյութեր, վորոնք անվանվում են դեկոթյամբ այնպիսի նյութեր, վորոնք անվանվում են դեկոտորին (մինչև 20%) : Մինչև այժմ մեղվապահները աշխատում են յին դանազանել իսկական մեղրը գազպինից՝ նայետում են յին դանազանել իսկական մեղրը գազպինից՝ նայետում են յին համին, բայց այդ բանը հաջողվում էր վոչ լով գույնին և համին, բայց այդ բանը հաջողվում էր վոչ միշտ: Պրոֆ. Կաբլուեկովը մասնացույց արեց հետևյալ հեշտ և հասարակ միջոցը տարբերելու գազպինը մեղրից:

Պետք է վերցնել մի մասն մեղր և յերկու մասն ջուր ու ավելացնել նրանց վրա թուռնդ գինու սպիրտ հինգ կամ վեց անգամ ավելի վերցրած մեղրի քանակից: Յեթե գաղպին չկա, հեղուկը հիշված պայմաններում մուռն է թափանցիկ կամ փոքր ինչ պղտորվում է: Իսկ յեթե մեղրի մեջ գաղպին կա, հեղուկը ընդունում է կաթնա-սպիրտակ գույն և այն գեպքում, յերբ գաղպինի քանակը մեծ է, հատակի վրա նստում է յուզանման մի շերտ:

Գաղպինային մեղր ունենալով, իբրև պաշար, մեղուները շատ վատ են ձմերում, ուստի և այդպիսի մեղրը պետք է հանվի փեթակից ու փոխարինվի ուրիշ կերակրով: Յերբ փեթակում չկա մեղրի պաշար, ամենալավ կերակուրը այդ գեպքում շաքարաջուրն է, վոր պետք է պատրաստված լինի, ինչպես վերևում ասացինք, մաքուր ամանի մեջ յերկու մասն շաքարից և մի մասն ջրից: Բայց վորովհետև շաքարաջուրը յեփելին պակասում է, ուստի պակասը լրացնելու համար ավելացնում են 2—3 բաժակ ջուր շաքարի ամեն մի փթի հաշվով: Բացի սրանից մեղվապահները խորհուրդ են տալիս անպատճառ ավելացնել շաքարաջրի վրա կիտրոնի թթվուտ, 1 մսխալ յուրաքանչյուր 10 ֆունտ շաքարի համար, սակայն այն ժամանակ, յերբ ամանի մեջ արդեն ածած կը լինին թե ջուրն և թե շաքարը:

Շաքարաջուրը, յեփած առանց թթվուտի, ստում է կորարելը, ձմեռը կը շաքարանա, կը վերածվի հատիկների (կը բյուրեղանա) ու կը դառնա անպետք կերակուր, այն ինչ յերբ թթվուտ են ավելացնում, շաքարաջուրն ամբողջ ձմեռվա ընթացքում չի շաքարանա: Շաքարաջուրը յեփելիս՝ քանի ամբողջ շաքարը չե լուծվել ջրի մեջ, պետք է անընդհատ լավ խառնել, վորպեսզի նա չայրվի, ու վորք վորը (քափը) քաշել: Խանձված շաքարը փասակար է ձմեռը մեղուների համար: Շաքարաջուրը պետք է յեփել հանդարտ կրակի վրա և ոչ ավելի քան 5 րոպե: Մեղու-

ներին տալիս են շաքարաջուրն այն ժամանակ, յերբ նա կը սառչի և կստանա այնպիսի ջերմություն, վորպիսին ունի նոր կթած կաթը:

Չարինը, հակառակ մեղվապահների մեջ տարածված կարծիքի, պնդում է, թե կիտրոնի թթվուտի ավելացումը 0, 3<sup>0</sup>/<sub>10</sub> քանակությամբ շաքարաջրին ճնշող ազդեցություն է գործում վոչ միայն շաքարի փոխարկման, այլ և մյուս բոլոր գործողությունների վրա, վորոնք անդի ունին ինչպես աշխատավոր մեղուների մեղրապարկի, այնպես էլ փեթակի մեջ մեղրի հատունանալու ժամանակ: Իր անձնական փորձերի վրա հիմնված՝ Չարինը ասում է, թե կերակրանյութի վրա թթվուտ ավելացնելիս անհրաժեշտ է մեծ զգուշությամբ վարվել: Թթվուտի գործածման գեպքում պետք է վեր առնել ամեն մի 10 ֆունտ շաքարաջրի համար  $\frac{1}{4}$  մսխալ թթվուտից վոչ ավելի (վոչ հանքային): Գործնական—մեղվապահների ցուցումների և Չարինի գիտական ավյալների մեջ յեղած այսպիսի տարբերությունը համենայն գեսս հարկադրում է զգուշարար վերաբերվել թթվուտի ավելացմանը շաքարաջրի վրա (ավելացնելով թթվուտը վորքան կարելի յե քիչ չափով):

Վերեվում նկարագրված կերակրանյութը պետք է տալ մեծ բաժիններով, 7—8 ֆունտ մի գիշերվա համար, նա յելով ընտանիքի ույժին: Յեթե կերակրենք մեղուներին փոքր բաժիններով, մայրը կսկսե ձու ածել: Այս հարցի վերաբերմամբ հետքերրական է Բուտկևիչի հետևյալ փորձը: Բուտկևիչը վերցրել էր փորձի համար 14 զույգ միաման փեթակներ: Հուլիսի 25-ից մինչև սոցոսոսի 14-ը 14 փեթակ ստանում էին ամեն յերեկո  $\frac{1}{2}$  ֆունտ կերակուր: Հետևանքն յեղավ այն, վոր կերակրած փեթակների մեջ փորձի վերջում վորդերի քանակությունը մե ջին թվով հավասար էր շրջանակի 1,3 ութերորդականին, իսկ չկերակրված փեթակներում—0,48-ին: Չվերի միջին քանակությունը կերակուր ստացողների փեթակներում

հավասար եր ութերորդական շրջանակի 1,3-ին, իսկ չը կերակրվածները փեթակներում—0,75-ին: Փորձը կատարվել էր Տուլայի նահանգում 1910 թվականին:

Աշնանային կերակրումը պետք է ավարտվի ոգոստոս ամսի ընթացքում: Կերակրի քանակությունը պետք է այնքան լինի, վոր ձմեռվա կերակրի ընդհանուր պաշարը դուրս գա վոչ պակաս 25-40 ֆունտից:

Բացի վերոհիշյալ կերակրումից՝ մեղվապահներից վոմանք կերակրում են մեղուներին աշնանը՝ կամենալով ավելի արդյունք ստանալ նրանցից: Բանն այն է, վոր մեղրը շուկայի գներով միշտ ավելի թանկ է շաքարից: Այս նկատումներով՝ մեղվապահները թողնում են մեղուներին միայն կես քանակությունը մեղրի այն պաշարի, վոր նըրանց հարկավոր է, իսկ մյուս կեսը փոխարինում են ավելի էժան կերակրով—շաքարով, վոր արվում է իբրև շաքարաջուր, ինչպես նկարագրվեց վերևում:

Մեղրի հիշված փոխարինումը շաքարով, իրանց մեղվանոցներում փորձել են մի շարք մեղվապահներ: Գերմանացի մեղվապահ Մարտենս-Լյուքսելի գիտություններով այն մեղուները, վորոնց փեթակներում մեղրը փոխարինվել էր շաքարի  $\frac{1}{4}$  կամ  $\frac{1}{3}$  քանակությամբ ձմերում են կատարելապես բարենաջող կերպով: Միևնույն ժամանակ նրանք չեն տանջվում ծարավից և ավելի սակավ հիվանդանում փորլուծությամբ: Նույնպիսի հետևանքներ ստացել է նաև ֆրանսիացի մեղվապահ Եղմոնդը:

«Մի անգամ,—ասում է Եղմոնդը, յես աշնանը գնեցի մեղուներ, վորոնց պետք է վոչնչացնեյին, և տալով նրանց կարևոր քանակությամբ շաքարաջուր, թողի ձմերելու: Գարնանը այդ փեթակը դուրս յեկավ լավագույնն ամբողջ մեղվանոցում: Հետևյալ տարին նույն փորձը կրկնվեց և ավեց նույնատեսակ հետևանքներ: Այդ ժամանակվանից սկսած մեղուների այդպիսի կերակրումը ինձ համար կանոն գարձավ»: Հյունդգենը յեվ Որտան արել են փորձեր՝

տալով մեղուներին, իբր ձմեռվա պաշար միմիայն շաքար, ապա շաքար՝ կիսով չափ խառնված մեղրի հետ և վերջապես միայն մեղր: Այն մեղուները, վորոնք ստացել էյին միմիայն շաքար, ձմերեցին շատ լավ, բայց գարնանը ձեռնամուխ չեղան ձագ հանելու մինչ այն ժամանակ, յերբ ստացան ծագկափոշի կամ նրան փոխարինող այլուր:

Պետրովսկի գյուղատնտեսական Ակադեմիայի մեղվանոցում մեղուների ձմերումը շաքարի և նրան հավասարաչափ մեղրի պաշարով՝ գործադրվում էր անընդհատ շատ տարիների ընթացքում և մեղուները այս պայմաններում ձմերում էյին միանգամայն հաջողակ կերպով: Վոչ այլասերումն և վոչ վորևե հիվանդություն չեն նկատվել այդպիսի բազմամյա ձմերումների ժամանակ:

Վերջապես մեղուների աշնանային և գարնանային կերակրման նշանակությունը հարցի վերաբերմամբ ամերիկայի մեղվապահ Ո. Պլատցը կատարել է հետևյալ փորձը.—Նա տալիս էր մի ընտանիքի կերակուր ոգոստոսի սկզբից մինչև ցուրտ որերի սկիզբը, իսկ մյուս ընտանիքը թողնված էր իր բազդին: Հոկտեմբերի 19-ին առաջին ընտանիքը 20 ֆունտով ավելի ծանր էր, քան յերկրորդը և ընդհանրապես ավելի ուժեղ:

Մարտի 4-ից կերակրումը վերսկսվեց: Մալիսի սկզբում առաջին ընտանիքի մեջ կային բազմաթիվ մեղուներ, բայց շատ քիչ մեղր, և վորովհետև այդ ժամանակ լավ բերք սկսվեց, ուստի և կերակրմանը վերջ արվեց: Յերկրորդ փեթակը ավելի թույլ էր քան ուժեղ:

Վերջ ի վերջո առաջին փեթակից ստացվեց միայն 40 ֆունտ ծոր մեղր, իսկ յերկրորդ փեթակից 92 ֆունտ ծոր մեղր և 25 ֆունտ հացի մեղր:

Պլատցը գալիս է այն յեղրակացություն, վոր յերբ փեթակում բավականաչափ մեղրի պաշար կա, ավելորդ աշնանային և մասամբ գարնանային կերակրումը անժամանակ

ուժասպառ են անում մորը և այս պատճառով ավելի վը-  
նաս են բերում, քան ոչուս:

4. Չմեռային կերակրումը

Մեղունների կերակրումը պետք է կատարել աշնանը  
սինչև ձմեռվա դալուսար: Չմեռային կերակրումը կարող  
է տեղի ունենալ միայն բացառիկ դեպքերում, յերբ որի-  
նակ, մեղվապահը գնում է այնպիսի մեղուններ, վորոնք  
չունին ձմեռային պաշար: Չմեռային կերակրման ժամա-  
նակ ամենից լավ է տալ մեղուններին հացի մեղր կամ սա-  
ռուշաքար, պատրաստված այնպես, ինչպես սուսը նկարա-  
գրվեց: Այս յերկու կերակրանյութերն էլ նախապես փոքր  
ինչ տաքացվում են՝ փեթակի մեջ դնելուց առաջ: Ծայ-  
րանեղ դեպքում կարելի յէ տալ մեղուններին գլուխ-շաքար՝  
թրջած ջրի մեջ: Մեղվապահներից վորոնք մեղուններին  
ձմեռային կերակուր պատրաստելու վերաբերմամբ հետևյալ  
խորհուրդներն են տալիս, — 1. վեր են առնում 4 մասն  
չլուխ-շաքար կամ շաքարավազ, ծեծում հավանքի մեջ և  
կշռաքարով տրորում այնքան, վոր ալյուր դառնա ու այդ  
ալյուրը մաղում շետիկով: Ստացված շաքարային ալյուրի  
մեջ ամում են տաքացրած մեղրի 1 մասն: Ապա շաղա-  
խում են ստացված զանգվածը ինչպես խմոր, բլիթների  
ձեփով փաթաթում ցանցառ քաթմանի մեջ ու տալիս մե-  
ղուններին: 2. Մեղվապահ Զույնվը այսպիսի խորհուրդ և  
տալիս, — մեկ ֆունտ շաքարավազի վրա ամել 8—10 գգալ  
ջուր և յեփ տալ կրակի վրա: Յերբ շաքարաջուրը  
բավականաչափ կեփվի (կը ձգվի), նրա վրա ցանել  
4 գգալ ցորենի ալյուր և այս բոլորը խառնել ու ամել  
ստանձին մետաղյա ձևավոր ամանների մեջ, վորոնք ի  
ներքուստ ծածկված են մոմած թղթով: Ստացված բլիթ-  
ները պետք է լինեն  $\frac{1}{4}$  վերջով հաստությամբ: Ապա այս  
կերը արվում է մեղուններին: Վերոհիշյալ բոլոր կերակրա-

նյութերը անպայման լավ ուտելիք են մեղունների համար  
ձմեռվա ընթացքում: Անպայման պետք է չմոռանալ, վոր  
ձմեռը միանգամայն անկարելի յէ տալ մեղուններին ջրալի  
կերակուր, վորովհետև այդպիսի կերակուրը կարող է սուս-  
ջացնել փորլուծություն:

5. Մեղունների կերակրումը մեծ Բանակուրյամբ մեղրամոմ սսանալու  
համար

Իր ժամանակին կովանը ցույց է տվել, վոր այդ վաս  
բերքի ժամանակ մեղուններին կերակրելով կարելի յէ հար-  
կադրել նրանց հացեր շինելու: Ինի մեջ տեղում գնում են  
չրջանակներ արհեստական մոմաթերով և մեղունները թե-  
թե կերակրման ազդեցությամբ շինում — վերջացնում են  
հացերը: Վիշնյակովը այս հարցի վերաբերմամբ փորձեր է  
կատարել Պետրովսկ. գյուղատնտեսական ակադեմիայի մեղ-  
վանոցում և յեկել այն յեզրակացության, վոր կերակրման  
միջոցով կարելի յէ հարկադրել մեղուններին մեղրամոմ ար-  
տադրել և հացեր շինել գլխավոր բերքի վերջանալուց հե-  
տո: Փորձերը սկսվել են հուլիսի 21-ին, և տևել մինչև  
ոգոստոսի 27-ը: Կերակուրը տրվում էր ամեն մի ընտա-  
նիքի որական մեկ անգամ —  $\frac{3}{4}$  ֆունտ: Ընտանիքներից  
մի քանիսը ստանում էին, իբրև կերակուր, շաքարաջուր  
(մեկ ֆունտ շաքար և մեկ ֆունտ ջուր), իսկ մյուսները՝  
մեղր: Փորձերի հետևանքը յեղավ այսպես, — փորձի յեն-  
թարկված փեթակներից յուրաքանչյուրի մեջ մեղունները  
շինեցին վերջացրին ստաիճանաբար հինգ-հինգ հաց, վո-  
րոնց մեջ շինվածքի ամենամեծ տարածությունը հավասար  
էր շրջանակի  $\frac{3}{4}$ -ին, իսկ ամենափոքր շրջանակի՝  $\frac{1}{5}$ -ին  
(կանգստրոտի շրջանակներ): Ինչ վերաբերում է մեղրա-  
մոմի քանակության, ստացված այս կամ այն կերակրա-  
նյութից, պետք է ասել, վոր տարբերությունը հոգուս  
շաքարի և և հավասար  $\frac{1}{4}$  ֆունտի. միևնույն ժամանակ  
մեղրի գործադրությունը այն փեթակի մեջ, վոր ստանում

եր շաքար, 1 ֆունտ 11 լոտով պակաս եր մյուս փեթակներին: Մեղուների կերակրման վերոհիշյալ յեղանակը, — ասում է Վիշնյակովը, — կարող է նշանակութուն ունենալ Ռուսաստանի շատ տեղերի և առանձնապես Կովկասի համար, ուր լինում են տարիներ, յերբ ստացվում են սակավարժեք և յերբեմնապես նույնիսկ դառնահամ ու թունավոր մեղրի տեսակներ:

Մեղրի այն տեսակները, վորոնք չեն կարող վաճառքի հանվել, կարելի չէ սպասարժեքել այս յեղանակով մեղուներից մեծ քանակությամբ մեղրամոմ ստանալու համար:

Այնուհետև, կերակրման հիշված յեղանակները գործադրելիս, հարկավոր կը լինի հաշվի առնել, թե տվյալ կերակրումը վորքան շահավետ է անտեսական տեսակետից: Մի տարվա փորձը, արդարացի կերպով նկատում է Վիշնյակովը չէ կարող վճռական նշանակութուն ունենալ:

#### 6. Մեղուների կերակրումը մեղրի ու օտար փոխարինող նյութերով

Վերջին ասարիները մեր յերկրում շաքարի պակասության և նրա թանկության պատճառով մեղվապահները հարկադրված եյին ուշադրութուն դարձնել ուրիշ քաղցր նյութերի վրա, վորոնք կարող եյին փոխարինել մեղվապահության մեջ անհրաժեշտ շաքարն ու մեղրը: Գիտական ճշգրիտ փորձեր, վորոնք պատասխանեյին այն հարցին, թե ինչ փոխանյութով (սուրբողամներով) կարելի չէ փոխարինել մեղուների սովորական կերակուրը, չկան. բայց մեղվապահական գրականության մեջ պատահում են առանձին մեղվապահների դիտողություններ այս հարցի վերաբերմամբ: Այդ դիտողությունների մեջ ցույց են տրվում հետևյալ գլխավոր տվյալները:

1) Դենիսովսկին խորհուրդ է տալիս մեղվապահներին կերակրել մեղուներին անպետք համարված կամ փրոնած (ծրակ) շաքարով (զեզին շաքար), վոր յերբեմն տր-

վում է մեղվապահներին զավառական հողային բաժանմունքներից: Այդ շաքարը մաքրված չէ և խոնավ, տաք յեղանակին սկսում է խմորվել և ստանում է անախորժ հոտ: Ինքն իրան ասում է Դենիսովսկին, այդ շաքարը կարող է վնասակար լինել մեղուների համար: Նրանից պետք է պատրաստել շաքարաջուր, յեփ տալ հավասարաչափ ջրի հետ, քաշելով փրփուրը, ավելացնել վրան  $\frac{1}{4}$  մասն մեղր, նորից յեփ տալ և սպյա, յերբ շաքարաջուրը սառչի, կարելի է տալ մեղուներին, ածելով հացերի կամ կերակրամանների մեջ:

2. Իբր յերկրորդ փոխանյութ (սուրբողատ) կարող են ծառայել դանազան գոշարները (բեքմեդ, մաթ, (ПАТОКА): Գետնախնձորի գոշարի մասին Զարինը գրում է այսպես. — «գրականության մեջ յեղած տվյալներով, ինչպես և իմ անձնական դիտողություններով՝ մեղուները գետնախնձորի գոշարով կերակրվելիս փորլուծութուն են ստանում և վերջ ի վերջս փոչնչանում են: Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր գետնախնձորի գոշարը պարունակում է իր մեջ մեծ քանակությամբ գեկտորին անվանված նյութեր (36,91% — 40%), վորոնք մի ինչ-վոր պատճառով անպետք են մեղուների կյանքի համար: Համաձայն Շելյուսինի հոդվածի, Հարավային Ռուսաստանի գյուղատնտեսական ընկերության անդամներից մեկի մեղվանոցը ամբողջովին փոչնչացավ՝ մեղուներին գոշարով կերակրելուց: Արտասահմանյան գրականության մեջ կան Կլեմենսի և Հայստի ցուցումները մեղուների փոչնչացման մասին հիշված կերակրից: Կորնովը բացասական հետեւանքներ է ստացել նաև այն գեպքում, յերբ կերակրել է մեղուներին գոշարի և շաքարավազի խառնուրդով: Նա վերջնում եր գոշարի և շաքարավազի հավասար մասեր ու վրան ավելացնում  $\frac{1}{3}$  մասն ջուր, յեփում խառնուրդը և հետո տալիս եր մեղուներին այդ կերակուրը՝ մի փթի քանակությամբ յուրաքանչյուր ընտանիքին: Կերակուրը

Նա ամէլ եր ոգոստոսի յերկրորդ կիսին, յերբ յեղանակը գեռ բոլորովին տաք եր: Մեղունները վերցրել էյին կերակուրը և կանոնավոր կերպով տեղավորելով բոլոր հացերում՝ սերեկել էյին նույնչափ գեղեցիկ, փոքրան սերեկում են և մեղրը: Այս յեղանակով կերակրած մեղունները նոյնմբերի սկզբում ներս տարվեցին և գեռեղվեցին ճանճահոցում: Ներս ամսելուց առաջ մեղունները կատարելապէս առողջ էյին, սակայն փեարվար ամսին յերեաց, փոք տամն յնտանիք, փորոնք ձմերում էյին շարարավազի և դոշարի պաշարով, փոշնչացել, փայր էյին թափվել փեթակի հատակի վրա, թողնելով սերեկած կերակրով յի շրջանակների կիսից ամէլին առանց դործադրութեան: Փեթակները ներսի կողմից բոլորովին չոր էյին: Մյուս կողմից Անտոնովը հագորդում է, թե նրա մեղունները կերել են գեռնախնձորի դոշարը՝ հովասար չափով խառնած շարարավազի և ջրի հետ: Շարարաջուրը նախորդ յեփում եր: Կերակրումը կատարվում եր ձմերային պաշար տալու նպատակով ոգոստոսի 2-ից: Մեղունները՝ կերակրի ալալիսի պաշարով ոժտված՝ լավ ձմերեցին: Նույնաման փատտի վրա մասնացույց է լինում Դենիսովսկին ևս: Նա խորհուրդ և տալիս վերցնել մեղուններին կերակրելու համար այսպէս անվանված սպիտակ, մաքրած գեռնախնձորի դոշար, փոք փոշ մի գեղբում թթված չպետք և լինի: Տասն ֆունտ դոշարի վրա, ասում է նա, պետք է ամելացնել 3 ֆունտ ջուր և 3 կամ 4 ֆունտ մեղր, այս բոլորը յեփ տալ, մի քանի անգամ փրփուրը քաշել և ապա, սեացնելով, տալ մեղուններին: Վերոհիշյալ տարածայնութեանները մեղվապահների ցուցումներին մեջ գեռնախնձորի դաշարի, փորպէս մեղուններին կերակրի վերաբերմամբ, հարկադրում են զայ այն յեղրակացութեան, փոք մեղվապահները պետք է խուսափեն այդ կերակրից իրենց մեղունների համար մինչև փոք ամիսը հարցը զիտական ճրջրիտ յեղանակով լուծվի:

Ճակնդեղի դոշարը պարունակում է իր մեջ յերեք տեսակ շարար, — ճակնդեղային, պաղաշաքար (ֆրուկտոզ) և խաղողաշաքար (գլյուկոզ): Պրոֆ. Յերնվիտինովը ցույց է տալիս ճակնդեղի դոշար ստանալու հետեյալ յեղանակը: 1. Ճակնդեղը մանրակրկիտ կերպով լվացվում է հողից մաքրելու համար: 2. Լվացած ճակնդեղը մանրացվում է բերիչով կամ միս ձեծելու մեքենայով, ինչպէս խմոր: 3. Ստացված խմորը, հյութ դարձնելու համար, կամ ձեռքով ճղմում են և անցկացնում մաքուր քաթանի միջով և ձմում են ճնշող մեքենայով: Յերն հյութը դուրս հոսելուց կը դադարի, քուսպի վրա տաք ջուր են ածում, խառնում, թողնում են առժամանակ հանգարտ մնալու և նորից ձմում են մեքենայով: Ապա այդ հյութը գետեղում են առանձին առաջին հյութից և գործ են ածում ջրի փոխարեն, քուսպի 2—3 նոր բաժինների համար ու այս բոլորը կատարելուց հետո միայն ամելացնում են առաջին հյութի վրա: 4. Ստացված հյութը տաքացնում են մինչև յեփման աստիճանը, յեփում են կարճ ժամանակ (փորպէսի կտրվեն այսպէս անվանված սպիտակուցային հյութերը) ապա քամում են՝ ածելով պարկի մեջ: 5. Քամած հյութը յեփ են տալիս մի կաթսայի մեջ նախ՝ ուղղակի կրակի վրա և հետո՝ կաթսայով հյութը դնում են մի այլ, ավելի մեծ կաթսայի մեջ, փորի մեջ ջուր է ածած: Հյութով լի կաթսայի հատակի տակ դնում են 2—3 տափակ քար, փորպէսի նրա հատակը չկաշի արտաքին կաթսայի հատակին: Յեփ տալը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև փոք հյութը բավականաչափ թանձրանա և իր թանձրութեամբ նմանի վաճառվող դոշարին: Յեթե յեփ տալը կատարվում է կրակի վրա սիայն սի կաթսայով, այդ գեղբում հյութը շարունակաբար պետք է խառնել, փորպէսի չայրվի: Ճակնդեղի դոշարի պատրաստման վերոհիշյալ յեղանակը շատ պարզ է և հեշտութեամբ նույնը կարող է կատարել ամեն մի մեղվապահ: Հիշված դոշարի

պատրաստման մյուս յեղանակների համար պահանջվում է ունենալ ջերմաչափ, ձմբաթթվուտ, լակմուսյան թուղթ,— այս բոլորը դժվար իրագործելի են սովորական մեղվապահի համար, ուստի և այստեղ չեն նկարագրվում:

Ճակնդեղի դոշաբի նշանակության վերաբերմամբ, փորպես մեղուների կերակրի, *Դյակով-Նովիկովը* հաղորդում է հետևյալ փաստը: Սարկովի նաճանգի Ալեքսեևկա գյուղի գյուղացիները յուրաքանչյուր տարի գաբնան գետ պատրաստում են փորոշ քանակությամբ գտած դոշաբ և դարունքվանից սկսում են նրանով կերակրել մեղուներին: Յերբ փեթակները լցվում են, նրանք վերցնում են շրջանակների մի մասը, մեղրը թափում ցենտրաֆուգով, իսկ դատարկած շրջանակները նորից դնում են փեթակների մեջ՝ շարունակելով կերակրել մեղուներին: Հունիսի վերջում կերակրումը դադարեցվում է, մեղրի ավելորդը վերցվում, թափվում է ցենտրոֆուգով և վաճառահանվում: Մեղուների ընտանիքները այս պայմաններում լինում են ուժեղ և փոչնչացած մեղուների թիվը շատ քիչ:

*Դյակով-Նովիկովը* փորձել է դորձադրել ճակնդեղի դոշաբով կերակրումը մեղուներին իր մեղվանոցում զարնանք: Վնաս այդպիսի կերակրումից չի յեղել:

*Դենիսեվսկին* խորհուրդ է տալիս գործ ածել ճակնդեղի պարզ և քաղցր դոշաբը: Այն դոշաբը, փոր ստացվում է շաքարավազի մշակումից և փոր շուկայում հայտնի է *Մելխասս անունով*, *Դենիսեվսկու* ասելով անպետք է, փորպես մեղուների կերակուր:

3. Ածիկ ալյուրից պատրաստված դոշաբը պարունակում է իր մեջ ածիկային շաքար (մալտոզ 52<sup>0</sup>/<sub>0</sub>—62<sup>0</sup>/<sub>0</sub>), մի նյութ, փոր կոչվում է դեկտարին: Իբրև նյութ այդպիսի դոշաբ ստանալու համար ծառայում են գեանախնձորի ալյուրն (ոսլա) և գարու ածիկը:

Ածիկ ալյուր անային յեղանակով կարելի յե պատրաստել այսպես.—վերցնել անցած տարվա ցորենից կամ ա-

վելի լավ է գարուց մի փորոշ քանակություն, թրջել 13<sup>0</sup>—15<sup>0</sup> ջերմություն ունեցող ջրում 36 ժամվա ընթացքում, առկը նստած և յերեսն յերած թեթև հատիկները դեն գցել ու ջուրը փոխել յերեք անգամ: Ապա ուռած հատիկները հանել ջրից, 6—7 ժամվա ընթացքում թողնել չորանալու, խառնելով հասա շերտի նման՝ փոել մի տաք, բայց փոշ չափազանց տաք տեղ, ծածկել քաթանի մի կտորով խոնավությունը և ջերմությունը պահպանելու համար, բայց այնպես փոր ողը ազատ մուտք ունենա: Յերկու—յերեք որ անցնելուց հետո ցորենը կամ գարին կսկսեն ծլել ու 10—12 որից հետո, իսկ յեթե ջերմության աստիճանը ցածր է, նույնիսկ 20 որից հետո, ծիլերը կը հասնեն հատիկի 1<sup>1</sup>/<sub>2</sub> չափին: Այն ժամանակ հատիկները պետք է չորացնել տաք վառարանի (ոուսական) վրա, բաժանել ծիլերը, հատիկները խոշոր աղալ և արդեն ածիկ ալյուրը պատրաստ է: Ածիկ ալյուրից դոշաբ պատրաստելու համար *Յերեվիտինովը* խորհուրդ է տալիս այդպես վարվել.—պետք է վերցնել 1 ֆունտ ածիկ գարի, աղացած ինչպես փոշի, և ածել յեփ տված ու գոլ ջրի մեջ: Չուրը պետք է վերցնել 5 բաժակ և ապա թողնել, փոր այդ խառնուրդը մնա յերեք ժամ, յերբեմն այսպես խառնելով: Ապա պետք է անցկացնել խառնուրդը նոսր կտորի միջով ու դտել քաթանով:

Բայի ածիկ գարուց կարելի է վերցնել 1 ֆունտ ոսլա (կրախումալ) և լուծել 2 բաժակ ջրի մեջ: Ստացված ոսլայի կաթը աստիճանաբար պետք է ածել, արագ խառնելով, 16 բաժակ յեփ տված ջրի մեջ: Յերբ այս շրջանուման խառնուրդը կը սառչի մինչ 60—65<sup>0</sup> Յ. (այսինքն մինչ այն աստիճան, փոր ձեռքը դիմանա նրա մեջ), նրա վրա ավերացնում են, շարունակ խառնելով, 2 բաժակ ածիկ գարու լուծվածք, պատրաստված այնպես, ինչպես ցույց արվեց քիչ առաջ: Շրջանման խառնուրդը կսկսե ջրակալել և յերեք բոպելից հետո կը դառնա արդեն հեղուկ

և համարյա թափանցիկ լուծվածք: Այս լուծվածքը թողնում են մնալու 60—65° Ց. Չերմությամբ 3 ժամ, փորպեղի շաքարացումը կատարվի լիովին և դեկտորին մնաքիչ քանակությամբ: Ապա լուծվածքը տաքացնում են մինչ յեփման ստիճան, քամում և յեփում այնքան, մինչև փորնա ստանա դոշաբի թանձրություն: Մեկ ֆունտ ուրայից ստացվում է մեկ ֆունտ ածրիկային դոշաբ: Այս կերպ պատրաստված դոշաբը, ասում է Յերենվիտինովը, պետք է պիտանի լինի մեղուներին համար:

Յուշկովը քահանան, փոր հայտնի մեղվապահ է, պատրաստում էր ածրիկ ալյուրից կերակուր մեղուներին համար հեռույալ կերպով.— մեղուներին 10 քնտանիք կերակրելու համար նա վերցնում էր 3 ֆունտ ածրիկ ալյուր, ածում էր նրա վրա 3 բաժակ յեփման ջուր (հաղիվ ձեռքը ղիմանա) և խառնում այնքան, մինչև փոր բոլոր կոշտերը արորվեցին, ապա ավելացնում էր նորից 10 բաժակ յեփման ջուր և նորից խառնում, փորպեղի կոշտեր չը մնան: Այնուհետև այս բոլորը 1½—2 ժամով զրվում էր մի տաք տեղ և յերեսը ծածկում: Խմորի Չերմության աստիճանը պետք է լինի 50-60° R: Այսպիսով ստացվում է ջրալի և քուղյրահամ խմոր, փորովհետև ամբողջ ուրան հիշված պայմաններում զտնում է խաղողաշաքար: Հետո, ասում է Յուշկովը, պետք է խմորը յեփել հանգարտ կրակի վրա կամ ավելի լավ է չուզուների ամանով դնել նոր փառած փառարանի մեջ: Յեփված խմորի վրա պետք է կրկին ավելացնել 15-17 բաժակ ջուր և թողնել փոր այդպես մնա 12 ժամ պարզվելու: Այդ ժամանակամիջոցում ալյուրային մասերը կը նստեն հատակի վրա, իբրև դիրա, իսկ վերեփում կը հավաքվի մաքուր և քաղցր հեղանյութ, փոր պետք է քամել քաթանով: Քամած հյութի կամ հեղանյութի վրա ավելացվում է 3-4 ֆունտ մեղր և այս բոլորը յեփ տալուց ու սառեցնելուց հետո՝ արվում է մեղուներին: Յերենք ֆունտ ածրիկայութից ստացվում է 20 բաժակ կե-

րակուր: Ռուժենցևովը գործադրել է հիշված կերպ իր մեղվանոցում և փոշ մի փոս բան, բացի լավից, այս տեսակ կերակրումից յես չեմ տեսել, ասում է նա:

4. Վոգորենու (կեչի) կամ ախկենու (КЛЕЧ) հյութ ստացվում է այդ ծառերից հեռույալ կերպով.— ծառերի մեջ շաղափով (բուրդի) բացվում է մի ծակ 5-6 վերջուկ զուցե սանախմետր, արամագծով, փորել մեջ զրվում է սագի փետուր կամ մի այլ խողովակ: Հյութը, փոր գուրու կը հոսե այս խողովակներից, հավաքվում է համապատասխան ամանի մեջ: Ծառից մի գույլի (վեղրո) չափ հյութ ստանալուց հետո, բացված ծակը պետք է փակել խցանով, փորպեղի հյութը այլ ևս գուրու չհոսե: Ստացված հյութը յեփ է արվում այնքան, փոր մնա միայն նրա ⅓-ը կամ ⅓-ը, ապա այդ թանձր հյութի ամեն մի 10 ֆունտի վրա, ավելացվում է 1-3 ֆ. մեղր. այս բոլորը նորից յեփվում է և սառեցնելուց հետո՝ արվում մեղուներին:

Պրոֆ. Լոզինովը կերակրել է մեղուներին կազանի նաճանգում փոգորենու (կեչի) յեփ աված հյութով, փորը պարունակում է իր մեջ 26% շաքար: Փորձը սկսվել է մայիսի 21-ին և ավարտվել 31-ին: Փորձի հետևանքն ապացույցեց, փոր զարնանը մեղուներին փոգորենու հյութով կերակրելը լիովին հնարավոր է, նպատակահարմար և անփաս:

5. Պրոկուպենկոն Տավրիկյան նաճանգում կերակրել է մեղուներին ձմերուկով: Տաշտի մեջ նա ձմրել է ամենաճատուն և քաղցր ձմերուկներ ու վերան ածել քիչ մեղր՝ մեղուներին գրավելու համար: Կերակրումը կատարվել է ոգոսասոսին: Հինգ քնտանիք, փորնա կերակրվել էյին այս յեղանակով, զրվեցին ձմերանոց և զարնանը զետեղվեցին ամարային տեղերում միանգամայն առողջ:

6. Մեղվապահական գոտադրքերում յերբեմնապես մասնացույց են անում կաթի, ձվի և այլ խառնուրդները վրա, փորպես մեղուներին հարմար կերակրի: Կուրտ-Լոյսելյի

սովյալներին նայելով, մեղուները բուրբուրովին չեն յուրացնում կաթը: Բացի սրանից՝ այն վանդակիկների ազատ ծայրերը, վորոնք ի ներքուստ ծածկում են մեղվի աղիքային անցքը, կաթով կերակրված մեղուների մեջ առավել կամ պակաս չափով ավերվում են:

Կարելի չե նույնպես, վոր մեղուները ձվի մեջ զտնված ճարպային նյութերը, կաթի նման, չեն կարողանում յուրացնել:

Ընդհանրապես, խոսելով փոխանյութերի (սուրբողատների) մասին, իբրև մեղուների կերակրի, պետք է ի նկատի ունենալ, վոր նրանց դերը քիչ է ուսումնասիրված, ուստի և մեղվապահը պետք է դիմի նրանց ոգնության միայն բացառիկ դեպքերում: Ամենալավ կերակուրը մեղուների համար նրանց բնական կերը՝ մեղրն է: Այսպատճառով ամեն մի մեղվապահ պետք է տանի իր անտեսությունն այնպես, վոր մշտապես մեղրի պաշար ունենա մեղուներին կերակրելու համար:

7. Կերակրամաններ չեղ կե սպու յեղանակներ փերակների մեջ

Կերակրամանները, վորոնց մեջ անվում է կերակուրը մեղուների համար, շինվում են զանազան նյութերից: Կերակրամանները լինում են փայտյա, կավյա, ապակյա և մետաղյա:

Կերակրամանների շինվածքի ձևերը լինում են չտփազանց զանազանատեսակ: Յերևի 50-ից ավելի սխտեմներ կան, վորոնցով շինվում են կերակրամանները, վորոնք հեշտ են պատրաստվում և վորոնք զործնական տեսակետից ամենից ավելի պիտանի չեն:

1. Փայտյա կերակրամաններից ամենից ավելի տարածված են Միլլերի կերակրամանները: Նա շինվում է բարակ յերեսքաշի տախտակից (ֆաներա): Չեր նման է արկղի, վորի յերկայնությունն է 18 դյույմ, լայնություն

նր — 11 1/2 դ. և բարձրությունը 4 3/4 դ. (նկար 7). Արկղի հատակը մեջ տեղում կարծես ծալվում է դեպի ներս՝




Նկար 7

յերկու ուղղահայաց պատերի նման (նկար 8, y, x): Վերջինների յերկու կողքից ավելացվում են յերկու միջնորմեր (նկար 8 BD), վորոնք չե հասնում մինչև արկղի հատակը: Ազատ տարածությունը հատակի վե միջնորմի յեզերքի միջև ծածկվում է յերբեմն յերկաթալարի ցանցով, վոր մեխվում է միջնորմին (նկար 8, B): Այդ միջնորմերի վրա վերեկից դրվում է ծածկույթ (նկար 8, A): Կերակուրը անվում է կերակրամանի մեկ կամ մյուս կիսի մեջ կամ միաժամանակ յերկուսի մեջ



Նկար 8


էր: Մեղուները մանում են կերակրամանի յերկու պատերի մեջ յեղած անցքով (նկար 8, Z), բարձրանում են վեր, ինչպես, ցույց են տալիս պարները և վերցնում կերակուրը B-ից D պատերի միջև զտնված տարածությունիւնից (նկ. 8):



Նկար 6

2. Չագ ստանալու նպատակով կերակրումն կատարելիս՝ Յարցիկը խորհուրդ է տալիս Միլլերի կերակրամանը շինել միակողմանի, այսինքն՝ մի անցքով քառակուսու արտաքին պատերից մեկի մոտ, մոտ 3 վերջով լայնությամը և 1—1 1/2 վերջով բարձրությամը: Այդ տեսակի կերակրամանի պատերը ցույց է տված 9-րդ և 10-րդ նկարների վրա: A և 6 տարածությունը, վոր ցույց է տված նկարի վրա, ծածկվում է վերեկից բարակ տախտակով, վոր թեթևակի ամրացվում է մեխերով, Այս ձևի կերակրամանի մեջ կարելի չե անել 3 բաժակ հեղուկ կերակուր:

3. Շրջանակաձև կերակրամանը կազմվում է հետևյալ կերպով,—բնի սովորական շրջանակի մեջ դրվում է մի փայտյա արկղիկ այնպես, Վոր նրա մեջ մանելու անցք մնա շրջանակի վերին ձողի և կերակրամանի յեղերքի միջև. Այդպիսի կերակրաման գծագրված է 11-րդ նկարի վրա: Նրա մեջ հեղուկ — կերակուր ամելու համար՝ շրջանակի վերին ձողի մեջ բաց են անում մի ծակ, վորի մեջ դրվում է ձագար: Կերակուրը ամվում է կերակրամանի մեջ այդ ձագարով:



Նկար 10

4. Կերակրատաշտերը շինվում են բարակ յերեսքաշի տախտակից կամ լինում են փորածո, այսինքն փորված փայտի կտորի մեջ: Տաշտերը շինում են այնպիսի չափերով, վոր նրանց մեջ մանի յերկու բաժակ հեղուկ: Վորպեսզի մեղուները չխեղդվեն կերակրամանի սեջ, ինչպես նաև շրջանակում ու տաշտերում հեղուկ կերակրի մեջ գցում են խցանի կտորներ, մարուր տաշեղներ կամ ծակոտած բարակ փայտյա լաստիկներ:



Նկար 11

Սորհուրդ են տալիս առաջուց հալած մեղրամոմ ամել այն փայտյա կերակրամանների մեջ, ուր պետք է լցվի կերակուրը:




Նկար 12



Նկար 13

5. Կավյա կերակրամաններ:

Կավյա կերակրամանները պատրաստվում են հատկապես այն ձևով, վոր ցույց է տված 12—15 նկարներին վրա և կամ իբր կերակրաման կարող են ծառայել այն կավյա պոուկները, վորոնք սովորաբար գործ են ամվում



Նկար 14




Նկար 15

իբր ծաղկաման:

6. Ապակյա կերակրամաններ:

Ամենահասարակ կերակրամանը ապակյա բաժակն է (բանկա): Նա սովորաբար լինում է զլանաձև տանում է 1 1/2—2 ֆունտ հեղուկ: Յերբ ջրալի կերակուրը լցրած կը լինի նրա մեջ, բաժակի (բանկայի) բերանը կապում են փափուկ կալենկորի, նոսր բաթմանի կամ կտավի կտորով: Բաժակի բերանը պետք է կապել այնպես պինդ, վոր ծածկույթը բոլորովին ձգված լինի: Կերակրամանը դրվում է փեթակի մեջ զլխիվայր, այսինքն կապած բերանը ուղղած ներքև: Կերակրամանը փեթակի մեջ զնելիս՝ պետք է արագ շուռ տալ նրան և կատարել այդ գործողությունը փեթակի վրա, վորպեսզի կերակրի մի մասը, յեթև թափվի, զոնե թափվի փեթակի մեջ:

7. Զանազան ձևերի մետաղյա կերակրամանները շափազանց բազմաթիվ են, բայց նրանք բոլորն էլ ստոր են իրենց արժանավորության մեջ, կավյա և ապակյա կերակրամաններից: Նախ նրանք ավելի թանկ են վերջիններից, հետո մետաղյա կերակրամաններ ամեն



Նկար 19

տեղ չի կարելի շինել. նրանք՝ գործարկելուց հետո միշտ անհաճո տեսք ունին, ժանդոտում են և վերջապես, մեղուները

ցուրտ յեղանակին, քովելով սառն մետաղին,՝ հաճությամբ  
 չեն մտնում կերակրամանի մեջ: Ամենից ավելի պիտանին  
 մետաղյա կերակրամաններից այսպես անվանված շատրվա-  
 նային կերակրամանն է: (Նկար 16): Նա վոչ այլ ինչ է,  
 յեթե վոչ թիթեղյա մի բանկա՝ նեղ, յերկարավուն բերա-  
 նով, վոր բացվում է դեպի կիսախողովակաձև կոթը: Կո-  
 թը, իր հերթին ծածկված է թիթեղյա մի շերտով, վորի  
 մեջ բացված են ծակեր: Ապա կերակրամանը զործածելիս  
 պետք է վարվել այսպես, — կոթը փեթակի արկանոցից  
 անցկացնել ներս, իսկ ամանը՝ թողնել դուրսը:

Պինդ կամ կոշտ կերակուրը, ինչպես որինակ, սա-  
 ուռչաքարը, գլուխ-շաքարը կամ այսպես անվանված կե-  
 րակրային բիթները զրվում են տափակ յերեսով ուղղակի  
 շրջանակների վրա, վորոնք կպած չեն իրար հետ, կամ  
 տեղավորվում են յերկու շրջանակների միջև և կամ, վեր-  
 շապես, գետեղվում են մի շրջանակի մեջ: Ծառակոճղի  
 փեթակներում հիշված կերը տալիս են այսպես, — բանա-  
 յով վերին խուփը՝ վորոշ չափով կտրում են հացերը և կե-  
 րակուրը տեղավորում այդ կտրվածքի մեջ: Ավելի ևս ամ-  
 րացնելու համար շաքարի կամ սաուռչաքարի շերտիկները՝  
 փոքրիկ փայտե նեցուկներ են կոխում հացերի մեջ այն  
 ձևով, վոր նրանք ամուր պահեն կերակուրը: Լամանովան  
 խորհուրդ է տալիս ծառակոճղի փեթակներում մեղուների  
 կերակրումը կատարել այսպես, — բաց անել ստորին խու-  
 փը և փեթակի հատակի վրա դնել տաք աղյուս՝ փաթա-  
 թած քաթանի կտորով: կերակրանյութը վերին խուփի  
 միջոցով սեղմվում է հացերի արանքը, (յեթե հացերի յե-  
 գերքները ուղղված են դեպի արկանոցները) և կամ արը-  
 վում է փայտյա տաշտակներով՝ անցկացրած ալյուսի  
 յերկարության ձողերի վրա, վոր տաշտակը հասնի անմի-  
 ջապես հացերին: Հեղուկ-կերակուրը արվում է կամ վե-  
 րում նկարագրված կերակրամաններից մեկում կամ ուղ-  
 ղակի ամվում է դատարկ հացերի մեջ: Այդ աշխատանքը

կատարվում է այսպես, — մի մարդ բռնում է հացը թասի  
 վրա, իսկ մյուսը բռնելով սրակիչը 3-4 վերջով հեռավո-  
 րությամբ, լցնում է հացը յերկու կողմից: Հարուր շրջա-  
 նակ կարելի յե լցնել 1 1/2-2 ժամում: Կցրած հացերի տակ  
 դնում են թավա կամ մի յերկաթյա թերթ՝ ծավված յե-  
 գրներով, վորպեսզի հացերից կաթած կերակուրը զուր  
 չը կորչի: 5-10 բուպեյից հետո հացերը կարելի յե դնել  
 փեթակների մեջ: Յեթե սրակիչ չկա, կերակուրը հացերի  
 մեջ կարելի յե ամել թեյամանով, վոր բռնում են հացի  
 վրա կես արշինաչափ բարձրությամբ և հետոհետե ամում  
 հեղուկները հացերի բջիջների մեջ: Այս յեղանակով զոր-  
 ծը ավելի դանդաղ է կատարվում, քան սրակիչով:

Թանձր կերակուրը տալիս են կերակրամաններով,  
 վորոնք զետեղվում են փեթակի վերին մասում, առաստա-  
 ղի ձողի վրա: Վորպեսզի մեղուները կարողանան մուտք  
 ունենալ դեպի կերակրամանը, ձողերից մեկի կողքից կը-  
 տրվում-բացվում է մի ձեղք, մոտավորապես 1/4 վերջով լայ-  
 նությամբ և 2-3 վերջով յերկարությամբ: կերակրամանը  
 վերևից ծածկվում է: Այն փեթակներում, ուր փայտյա  
 առաստաղները փոխարեն, զործ են ամվում մումլաթ (կլե-  
 յանկա) կամ քաթան, նույնպիսի անցքեր են բացվում  
 նրանց մեջ, ինչպես և փայտյա առաստաղում: Միլերի  
 կերակրամանը դնում են ուղղակի շրջանակների վրա և  
 այնպես, վոր կերակրամանի հատակի բացվածքը (նկար 8,  
 չ) գա շրջանակների միջև դանված տարածության վրա:

Այն շրջանակների վրա, վորոնք չեն մնացել կերակրա-  
 մանի տակ, փռվում է քաթանի կտոր կամ զրվում է փայ-  
 տյա ձող, վոր մեղուները շանցեն այդ տեղերից: կերա-  
 կրաման-բաժակը նույնպես զրվում է փեթակի վերին մա-  
 սում, շրջանակների վրա: Այն փեթակներում, վորոնց  
 շրջանակների վերին ձողերը կաշում են իրար, կերակրա-  
 մանները զրվում են փեթակի հատակին՝ շրջանակների  
 տակ, Վորպեսզի մեղուները կարողանան ներքև գալ դեպի

կերակրամանը, ցուրտ յեղանակին կերակրամանը գնում են տաքացրած աղյուսի վրա, ինչպես ասվեց վերևում, կամ տաքացրած տափակ քարի վրա: Կերակրաման— շրջանակները զետեղվում են փեթակի ներսում: Վերջապես հեղուկ-կերակուրը կարելի յե տալ այն կերակրամանով, վոր պատկերացրած և 16-րորդ նկարի վրա, մացնելով կոթը փետակի մեջ արկանոցից:

Ամեն տեսակի կերակուր պետք է տալ յերեկոյան դեմ, յերբ մեղունները դադարեցնում են իրենց թոխչըրը գեպի դաշտ:

8. Մեղունների բնականուր կերակրումը

Յերբեմնապես մեղվապահները դործադրում են մեղուններին կերակրելու համար այսպես անվանված՝ ընդհանուր կերակրումն: Այս նպատակով վեր են առնում փոքր տաշտակներ, վորոնց մեջ ածում են ջրալի կերակուր: Վորպիպի մեղունները չխեղդվեն ջրալի կերակրի մեջ, տաշտակի մեջ գցում են տաշեղներ, դատարկ մեղրահացի կտորներ, կարատած ծղնոտ և այլ տեսակ թեթևակշիւ առարկաներ: Տաշտակը գնում են մեղվաճոցից հեռու մի տեղում, ծառերի, ցանկապատի կամ շինությունների յետեր: Դա արվում է այն նպատակով, վոր մեղունները այգպիսի կերակրումից հետո չսկսեն կեր գողանալ իրարից:

Ընդհանուր կերակրումը կատարվում է տաք սրերին, յերբ մեղունները բազմությամբ դաշտ են թռչում: Նա ունի և՛ բով, և՛ վատ կողմեր: Լավ է այն բանով, վոր մեղվապահից այդ աշխատանքի համար քիչ ջանք և ժամանակ է պահանջում և միևնույն ժամանակ այդ յեղանակով կարելի յե կերակրել շատ բնատանիքներ կարճ միջոցում: Յուրաքանչյուր բնատանիքի անշատ կերակրումը մեղվապահից պահանջում է շատ աշխատանք և ժամանակ: Մեղվապահը, որինակ, պետք է վերցնե ամեն մի փեթակի կը-

տուրը, ածե յուրաքանչյուր կերակումանի մեջ կերակուր, ապա նորից ծածկե կոռուրը և այն և այն: Իսկ ընդհանուր կերակրման վատ կողմն այն է, վոր ընդհանուր տաշտակից ավելի կեր կը վերցնեն ուժեղ բնատանիքները, վորոնք ամենից քիչ կարիք ունեն կերակրման, մինչդեռ թույլ բնատանիքներին շատ սակավ բաժին կընկնի, ուստի և հարկավոր կը լինի կերակրել նրանց առանձին: Բացի սրանից՝ ընդհանուր կերակրման դեպքում կերից կարող են ոգավել և այլ մեղուններ՝ ուրիշների մեղվաճոցներից, յեթե այգպիսիները հեռու չեն կերակրման տեղից ավելի քան 3 վերստ: Ընդհանուր կերակրումը կարելի յե գործադրել միայն բացառիկ դեպքերում:

9. Ջրի մասակարարումը մեղուններին

Մեղունները անպայման ջրի պահանջ ունեն մեղվապահական ամբողջ ժամանակաշրջանում, սկսած զարնանից, յերբ փեթակները դուրս են դրվում, մինչև ձմեռելու համար ներս տանելը: Նրանք ջուր են վերցնում ջրհորների մոտ, առուններից, լճակներից և բոլոր տեղերից, ուր ջուր կա, մանավանդ գարնան ժամանակ:

Նրանց հարկավոր ջրի քանակությունը, Պետրովի ասելով, կախված է շատ հանգամանքներից, առաջին՝ այն բանից, թե վորբան վորդ ունեն նրանք, շատ, թե քիչ, յերկբորդ՝ մեղրի հատկությունից, վորը կարող է լինել յերբեմն թանձր և յերբեմն ավելի ջրալի: Մեղրի հատունանալիս՝ ջրի մի մասը դուրըջիանում է, յերբ մեղրը զետեղված է բջիջներում. բայց կան գիտություններ, վոր մեղունները հանում են մեղրի մեջ պարունակված ջրի մի մասը՝ տեղանով մեղրը բջիջից բջիջ: Թե մեղունները տեղափոխելով մեղրը բջիջից բջիջ՝ ապացուցված փաստ է և խում են մեղրը բջիջից բջիջ՝ ապացուցված փաստ է և թե նրանք նույն միջոցին գանազան բջիջների մեղրը խառնում են իրար հետ—սա ել անվիճելի հարց է: Պետրովի գյուղատնտեսական Ակադեմիայի մեղվաճոցում կատարվել

են այսպիսի փորձեր. — մի մեղրահացի մեջ, վոր պարու- նակում եր սերեկած մեղր, վերջինը ներկվեց եողինի կամ միտիլենի լեղակի փոքրիկ կաթիլների ավելացմամբ: Ներ- կելու համար վերցնում էյին մեկ քառակուսի վերջուկ տարածություն: Կարճ ժամանակից հետո կարելի յեր տես- նել, վոր ներկած մեղրը ցրված եր բոլոր հացերում և բլու- նում եր շատ ավելի մեծ տարածություն:

Այլ ե բոլորովին այն հարցը, վոր վերաբերում ե ջուրը մեղրի կամ նեկտարի միջից հանելուն: Այդ փաստը ա- պացուցված չե դեռես: Ուղիղ ե, Րուտը հաղորդում ե, թե ինքը տեսել ե մի անգամ, վոր մեղուները, արևի ճառա- գայթների մեջ թռչելիս, հեղուկ են արտաթորում իրանց մարմիններից: Բայց ինչու Րուտը այդ հեղուկը համարում ե ջուր և ինչու այդ արտաթորումը նա համարում ե մեղ- րից բղխած — այս բոլորը վոչնչով հիմնավորված չե:

Չմեռն անցկացնելով դուրսը, բաց յերկնքի տակ, մե- դուները սովորաբար ջրի կարիք են գգում, վորովհետե դուրսը ձմեռելիս առաջանում են այնպիսի սրայմաններ, վորոնց շնորհիվ հարկ չի լինում յերկյուղ կրելու ջրի պակասությունից: Ընդհակառակը՝ յերը մեղուները ձմե- րում են ներսը՝ ճանճանոցում, յերբեմնապես ջրի պակա- սություն են գգում և այս հանդամանքը վատ ազդեցու- թյուն ե անում նրանց բարեհաջող վիճակի վրա, — մեղու- ները գտնում են անհանգիստ, զազարեցնում են վորդ բազմացնելը, սպանում են վորդերին և ծծում նրանց:

Սուսափելու համար այսպիսի տխուր հետևանքներից, վորոնք համեմատաբար սակավ են պատահում ու այն ել ճանճանոցի ջերմության բարձր աստիճաններում, պետք ե թողնել այդպիսի մեղուներին, իբրև ձմեռվա պաշար, վոչ շատ թանձր մեղր:

Ջրի հատկությունն անխտիր չե մեղուների առող- ջության համար, վորովհետե մեղուների մի քանի հիվան- դությունների տարածումը անմիջական կապ ունի կեղ-

տատ ջրի գործածության հետ: Լավագույնը, ի հարկե մեղուների համար մարուր ջուրն ե և ամենալավը — յեփ տված ջուրը: Ինչ վերաբերում ե ջրի տարության աստի- ճանին, պետք ե ասել, վոր մեղուների համար հարմարա- դույնը փոքր ինչ տաքացրած կամ գոլ ջուրն ե:

Ն. Ն. Բըյուխանենկոյի գիտողություններով՝ փոքր ինչ տաքացրած ջուրը առանձնապես ոգտակար ե մեղու- ներին: Ինչ վերաբերում ե աղի ջրի պիտանիության մե- դուների համար, այս հարցի վերաբերմամբ մեղվապահնե- րի կարծիքները միանման չեն: Չիշայրը հերքում ե մե- դուներին աղ տալու անհրաժեշտությունը: Րուտը ընդ- հակառակը՝ շեշտում ե աղի ջրի պահանջը մեղուների կողմից:

Բերարանի գիտողություններով՝ մեղուները առանձ- նապես սիրում են աղի ջուր վաղաժամ վորդեր բազմաց- նելու սկզբին: Այս ժամանակամիջոցում գործադրված աղի քանակությունը բավականաչափ մեծ ե, բայց հետո մե- դուները անտարբեր կերպով են վերաբերվում դեպի աղի ջուրը: Կարող ե լինել, վոր աղն անհրաժեշտ ե, վորպես կաթնահյութի մի բաղադրիչ մաս, վորով սննդվում են վորդերը, և ոգտագործվում ե վորպես մի մասն այն նյու- թի, վոր դեր ե խաղում հասակավոր մեղուների արտա- քին ծածկույթի և ներքին կմախքի կազմության միջոցին: Հավանական ե, վոր մեղուների կերած աղերի հետ կապ ունի այն փաստը, վոր ցուց ե տալիս Կելլերը, այն ե՝ աշխատավոր մեղուների միջին աղիքի վանդակիկներում կրային հատիկների կուտակումներ գտնելը: Մեղուներին ջուր մատակարարելը մեղվաբույժի կողմից տեղի յե ունե- նում համեմատաբար հազվագյուտ դեպքերում, գլխավո- րապես յերկարատե ցուրտ յեղանակին: Այն ժամանակ ուժեղ բնտանիքները յերբեմնապես դուրս են գցում իրանց ձագերին:

Այն բնտանիքները, վորոնց հիշված պայմաններում

ջուր և տրվում՝ ձագ դուրս չեն գցում: Մեղուններին անհրաժեշտ է ջուր տալ այն ժամանակ, յերբ կատարվում է մեղունների տեղափոխությունը կամ տեղի յե ունենում արհեստական ձագերի կազմություն: Այս պայմաններում չին ընտանիքների մեջ, փորոնցից վերցնում է ձագը, կամ վերցրած ձագերի մեջ դաշտ գնացող մեղուններ քիչ են մնում, ուստի քիչ են լինում նաև ջուր բերողները, մինչ-դեռ այդ ընտանիքներին ջուր է հարկավոր, փորովհետև նրանք ձագ են կերակրում: Այսպիսի ընտանիքներին պետք է ջուր տալ 3—4 սր, մինչև փոր ջահել, մեղունները թռիչքներ գործեն նոր տեղում և գնան բերք բերելու:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**I. ՄԵՂՈՒՆՆԵՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

Եջ

1. Աշխատավոր մեղվի աղիքային անցքի կազմությունը . . .	5
2. Աշխատավոր (բսնվոր) մեղունների մարսողության գործու- ղությունը . . . . .	9
3. Մեղունների կերակուրը . . . . .	17
4. Մեղունների ուտելիքի քանակությունը . . . . .	24
5. Մոր և բոսի աղիքային անցքն ու սննդառությունը . . .	31
6. Մեղվի փորգերի աղիքային անցքը և կերակուրը . . . .	35

**II. ՄԵՂՈՒՆՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ**

1. Մեղունների գարնանային կերակրումը կերի բացակայու- թյան ժամանակ . . . . .	40
2. Կերակրումն մեծ քանակությամբ ձագեր (փորգեր) ստա- նալու համար . . . . .	49
3. Մեղունների աշնանային կերակրումը ձմեռվա համար . . .	56
4. Չմերային կերակրումն . . . . .	62
5. Մեղունների կերակրումը մեծ քանակությամբ մեղրամոմ ստանալու համար . . . . .	63
6. Մեղունների կերակրումը մեղրն ու շաքարը փոխարինողը նյութերով . . . . .	64
7. Կերակրամաներն և կեր տալու յեղանակները փեթակի մեջ . . . . .	72
8. Մեղունների ընդհանուր կերակրումը . . . . .	78
9. Զրի մատակարարումը մեղուններին . . . . .	79

9478

# ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»

## Տ Պ Ա Գ Ր Վ ՈՒ Մ Ե Ն

(Ինտելեկտուալ սեփականության օբյեկտներ)

1. Դ. Մ. Հեղուկ.— Հողի մշակումը.
2. Ե. Կ. Ներդրուչայեվ.— Հողագործության համառոտ ձեռնարկ.
3. Պ. Պ. Ջիվորիկին.— Բազմամյա խոտերի մշակույթը.
4. Ն. Կուլագին.— Մեղունների հավաքումը.
5. Ն. Կուլագին.— Շրջանակային փեթակի ընտրությունը.
6. Մ. Ֆ. Իվանով.— Ընտանի թռչունների կերակրելը.
7. Ե. Ա. Բոզդանով.— Ինչպես եժանացնել կաթի արտադրությունը.
8. Վ. Ա. Խարչենկո.— Հորթերի աճեցումն ու սնուցումը.
9. Մ. Ֆ. Իվանով.— Սողերի կերակրելն ու սննդելը.
10. Ե. Ա. Բոզդանով.— Կերի սննդարարությունը.
11. Ա. Ա. Դորյայկով.— Այգիների և բանջարանոցների փաստանները.
12. Դորբաչեվ.— Փթախառ և նրա բուժումը:

Главлит № 1214.

Тираж 2000.

Ճ. Տ. Գ. Ս. Պոլիգր. Բաժ. 4-րդ տպարան, Պուշկ. փ. 3

2013

«Ազգային գրադարան»



NL0082362

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գ Ի Ն Ն Ե

1. Կովալենկո.—Քաղաքական գրագիտութիւն . . . 25 կ.
2. Ս. Կասյան.— Հայաստանի տնտեսական - դասա-  
կարգային ստրուկտուրան . . . . . 15 կ.
3. Ա. Մարտունի.— Հովհ. Թումանյանի ստեղծա-  
պործութեան սոցիալական արժեքը . . . 15 կ.
4. Հովհ. Քաջազնունի.— Հ. Հ. Դաշնակցութիւնն  
անելիք չունի այլևս . . . . . 75 կ.
5. Դեպի նոր կյանք—պիես . . . . .
6. Կարմիր ռազմիկի հուշատետրը . . . . .
7. Լիլիւսա.— Կոմմունիստական ընտանիքից զեպի  
կոմ. հասարակութիւն . . . . . 75 կ.
8. Վ. Նիկոլսկի.— Ինչպես ոգտագործել կենդանի-  
ների աղբը լավագոյն կերպով . . . . . 20 կ.
9. Ն. Կոպլագին.— Մեղսներին կերակրելը . . . . . 40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

10. Մ. Փ. Իվանով.— Գյուղատնտեսական թռչունի մուշուսը և  
զիրացումը.
11. Վ. Ա. Խարչենկո.— Հորթերի մեծացնելը և խնամքը
12. Դ. Մ. Գեղղա.— Հողի մշակումը.
13. Լինին (ժողովածու):

ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

Դիմել՝

Издательство „Мартакоч“.  
Тяфлие, ул. Троцкого № 6.

19. 2. 98  
Կասյան